ՏԱՐԱԶ

Դեղագիտական, Գրական, Հասարակական, Քննադատական, Քաղաքագիտական
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

Քսանեւչորսերորդ տարի № 7-8 ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ 1913—XXIV

Հասցէն՝ Тифлис, Редакція „ТАРАЗ“. Tiflis (Caucase), Direction „TARAZ“

Խմբագրութիւնը յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չտպւելիքը (ձեռագիրը) պակաս չէ վերադարձնում։

Անձնական տեսակցութիւն խմբագրի հետ ԵՐԵՔՇԱԲԹԻ և ՈՒՐԲԱԹ առ. ժ. 11—12։

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզւով։ Տարազի յայտարարական տողը առաջին երես 40 կ., վերջին 25 կ. մանրատառ (պետիտ)։ Արտասահմանից կրկնակի։ Շատ անգամ կրկնուողներն առանձին համաձայնութեամբ։

Ազգիւ-Տարազ ամսական 33 կ.

Տարազի ներկայ №-ը (VI-րդ հրտ.) 1 ր.

Խմբագրութիւն—Թիֆլիս, Գոլովինսկի պրոսպեկտ, տ. № 41, բաց է ամեն օր (բացի տօն և կիրակի օրերից), առ. 10½ ժ. մինչև 2-ը կէսօրից յետոյ։

1838 ՆՈՒԷՐ ՂԱՐԱԲԱՂԻ ՅՈԲԵԼԵԱՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻՆ 1913

ԿՈՉՆՍԿ—ԿՈԹՈՂ ՂԱԶԱՆՉԵՑՈՑ ՏԱՃԱՐԻ. ՇՈՒՇԻ.

ՇՈՒՇԻ. ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐՆԵՐ
Ղարաբաղի Թեմ. Յոբելեար Դպրանոցը իր սաներով. Նորագոյն Նկար
» » » Բաղդասար Միտրոպոլիտի և Սարգիս արքեպ. Հասան Ջալալեանի օրերին։
Շուշու Մարիամ. Օրիորդ. Ուսումնարանը. Ստ. վ. Սեդրակեանի օրով կառուցուած Խանդամիրեան գումարով։
FAC-SIMILÉ
Տ. Բաղդասար Միտրոպոլիտ։
ՊԱՏԿԵՐՆԵՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ
Տ. Տ. Մատթէոս I Ղարաբ. Թեմ. Դպր. Հոգաբարձ. տեղ.
Տ. Տ. Գէորգ V » » Բարձր Հովանի
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐ
Սարգիս արքեպ. Հասան-Ջալալեան.
Արիստակէս արքեպ. Սեդրակեան.
ՂԱՐԱԲԱՂԻ ՅՈԲԵԼԵԱՐ ԹԵՄ. ԴՊՐԱՆՈՑԻ
I ԽԱՐԻՍԽ
Համբարձում-աղա Հախումեան.
II ՏԵՍՈՒՉՆԵՐ
Վարժապետ Տէր-Գրիգոր ա. ք. Տէր-Աւագեանց։ Տէր-Յարութիւն ա. ք. Մելքոնեան։ Ներսէս-բէկ Աթաբէկեան։ Գրիգոր վ. (եպիսկ.) Աղափիրեան։ Պետրոս Շանշիեան։ Պերճ Պռօշեան։ Մատթէոս Հախումեան։ Խորէն վ. (եպիսկ.) Ստեփանէ։ Վասակ Պապաջանեան։ Սեդրակ Մանդինեան։ Ղազարոս Աղայեան։ Ջալալ-բէկ Իշխանեան։ Բժշ. Բ. Աղասարեան։ Համբարձում Առաքելեան։ Բենիկ Վարդապետ։ Եղիշէ Մանդինեան։ Լեւոն Սարգսեան։
III ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ
Սամւէլ Գիւլզատեան
Արսէն Թոխմախեան
Մանուկ Աբեղեան
Վրթանէս Փափազեան
Գրիգոր Պապեան
Երւանդ Լալայեան
Գարեգին Խաժակ
Ներսէս Շահլամեան
Յակոբ Խոջամիրեան
Ստեփաննոս Ներսիսեան։
IV ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
Յովհաննէս Տէր-Գրիգորեան (Վահան վարդապետ)
Առաքել Բահաթրեան հռչակաւոր մանկավարժ։
Փարսադան Տէր-Մովսիսեան, Մագիստրոս Մեսրոպ եպիսկոպոս։
Նիկողայոս վ. Տէր-Աւետիքեան
Տմբլաչի Խաչան, Կոստանտին Մելիք-Շահնազարեան։
Ժիրեոն Հախումեան
Մուրացան, Գրիգոր Տէր-Յովհաննիսեան
Գաբրիէլ վարժապետ, Ղուլիքեխայեան
Լէօ, Առաքել Բաբախանեան
ՅՈԲԵԼԵԱՆԸ ԿԱԶՄՈՂՆԵՐԸ ՈՒ ԱՋԱԿՑՈՂՆԵՐԸ
Տ. Բարգէն վ., ներկայացուցիչ Վեհ. Կաթողիկոսի.
Տ. Զաւէն վ. Նախաձեռնող, Նախագահ Յոբելեանի Յանձն. և առաջնորդ Ղարաբաղի թեմի։
Հոգաբարձուներ Դպր. և Յոբել. Յանձն. անդամներ.
Բաղդասար Արզումանեան.
† Յովհաննէս Միք. Արամեան.
ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆԵՐ ՅՈԲԵԼ. ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
Տ. Զաւէն վ., Տ. Նազարեան, Մովսէս-բէկ Իսպաջեան։
ՏԵՍԱՐԱՆՆԵՐ
Ւն-չայ՝ Դուզխու Քեալբաջարում։ Ղարաբաղի աշուղը Շուշայ-Ղալի ժայռերի մէջ։ Շուշի քաղաքը հայ-թրք. ատելութից յետոյ։ Երեւանեան Դարբասի Բարձունքը Շուշում։
ՆԻՒԹ
Բացարձակ Նամակներ Լ| Ուղերձ Ղարաբաղի Յոբելեար Դպրանոցին . . . Տ. Նազարեան
Իշխան Բաղդասար Միտրոպոլիտ (Կենսագրական)
Ղարաբաղի Յոբելեար Դպր. խանձարարուրի մէջ։
» » միջոցները և ղեկավարները։
ՖԵԼԵՏՕՆ
Իմ աչքի լիս Ղարաբաղցիներին. Տմբլաչի Խաչան
—
ՔՐՈՆԻԿՈՆ
Յոբելեար Հոգեւորական Շկոլի շուրջը . . . . . Տ.
Ղարաբաղի Ազգ.-Հոգ. Դպր. 75-ամեայ յոբելեանը.
ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Աւերակներ, էտիւդ . . Կարինէ
Ժայռը Հայրենի (բանաստեղծ.) Կ. Արասխանեան
Քերծը (բանաստեղծ) . . Կայծ
Հայրենի երկրում (բանաստեղծ.) Ց. Խանզադեանց
Այսպէս է ասում աւանդութիւնը . . Մռաւեան
ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ
Յուշեր՝ Նոտաներ 3 ձայնի (Դիսկ I, II, և ալտօ) . Գ. Միրզոյեան-Սևենի.
—
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
Տեղեկագիր Ղարաբաղի Թեմ. Յոբելեար Դպրանոցի։
Ղարաբաղի Թեմի ուսումնարանները։
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ
Նուէրներ Յոբել. Դպրանոցի և Թեմի աշակ.
Կարգ Ղար. Թեմ. Դպր. Յոբել. հանդէսների.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ 1913
1838 ԴՊՐԱՆՈՑԻ LXXV-ԱՄԵԱՑ ԳՈՅՈՒԹԵԱՆ

(Քաղուածք պաշտօնական հրատարակութիւնից)

Բաղդասար Միտրոպոլիտ Հասան Ջալալեանցը Գանձասարի վանքից 1837 թ., Պօլօժէնիայի հաստատութիւնից յետոյ, տեղափոխւում է Շուշի, իբրև Ղարաբաղի թեմի առաջնորդ և գնում ս. Էջմիածին օրէնքով նշանակւած երդումը տալիս ու մտնում պաշտօնի։ Այդ ժամանակն էլ նա անում է հետը Երևանում արդէն բացւած Թեմական դպրանոցի «շտատը», (դպրանոցի դասատուների ռոճիկների ցուցակը) և վերադառնում։ 1838 թւին բացւում է դպրանոցը։ Կոնսիստորեան նոյն թւին յունիսի 29-ին դիմում է ս. Էջմիածնի Սինոդին, որ հաստատէ նորաբաց Թեմական Դպրանոցի (Հոգևոր Ճեմարանի) շտատը (բիւջէն)։ Կառավարիչ և վերին դասարանի Ռուսաց լեզուի ուսուցչին 450 ռ., Հայոց լեզուի ուսուցչին 300 ռ., պատմութեան, աշխարհագրութեան, թւաբանութեան ուսուցչին 330 ռ., պատրաստական դասարանի Ռուսաց լեզ. դասատուին 200 ռ., Հայոց լեզ. ուսուց. 200 ռ., պարսից լեզ. ուսուց. 200 ռ., Ճեմարանի առօրեայ ծախք 180 ռ., ընդամենը 1860 ռ. Սինոդը հոկտ. 8-ի գրութեամբ հաստատում է այդ շտատը։ Բաղդասար Միտրոպոլիտը նոյեմբ. 9 ին օրհնութեան թուղթ է ուղարկում թեմի 6 շրջանների՝ Դիզակի, Վարանդայի, Խաչէնի, Ջրաբերդի, Օգիւմիւրուլի եւ Բարդաբասարի հայ ժողովրդին, որ կամաւոր նւիրատւութեամբ օգնեն հոգևոր ատեանին և Հոգևոր Ճեմարանին, ուր սովորում են Ղարաբաղի թեմի հոգևորականների երեխաները, որտեղ պէտք է ազգերի և լեզուների գիտութիւն ձեռք բերեն և ուսանելուց յետոյ ժողովրդի ճշմարիտ, իմաստուն հովիւներ դառնան։ Թէ հոգևոր ատեանը և թէ դպրանոցը զուրկ էին եկամուտներից, ուստի Միտրոպոլիտը յաճախակի դիմումներ է անում մի կողմից ժողովրդին, միւս կողմից կաթուղիկոսին և Սինոդին օգնելու։ Սինոդին ուղղած մի գրութեան մէջ Միտրոպոլիտը յայտնում է, որ ժողովուրդը սիրով նւէրներ չի տալիս, առարկելով, որ դպրանոցում սովորում են միայն հոգևորականների զաւակները, իսկ աշխարհականներինը՝ ոչ։ Սինոդը 1838 թ. դեկտ. 17-ին թոյլ է տալիս, երբ տեղ լինի, դպրանոցում ընդունել նաև աշխարհականների որդոցը։ Դպրանոցի առաջին ուսուցիչներն են եղել Գրիգոր աւագ սարկաւագ Տէր Աւագեան, Թուրքաց և պարսից լեզուների համար մոլլա Ալլահվերդիև, նրան հետևեալ տարին փոխարինել է հայազգի միրզա Փարրուխ Ամիրխանեան։ 1841 թւին դպրանոցի դիրեկտոր եղել է Գաբրիէլ Մամիկոնեան։ Ուսումնարանը սեպհական շէնք չունենալու պատճառով վարձովի շէնքում է տեղաւորւած եղել. տարեկան վարձն եղել է 100 ռ.։ Նիւթական սղութեան պատճառով 1843 թ. դպրանոցն առժամանակ փակւում է. մարտի 1-ից 1844 թ. մինչև 1845 թ. յուլիսի 16-ը չը նայելով, որ դպրանոցն ունեցել է միայն 4 ուսուցիչ, տարեկան 120—100 ռ. ռոճիկներով, որոնցից էլ ոմանք ձրի են ծառայել 1—2 տարի։ 1845 թ, Միտրոպոլիտը կրկին ժողովրդի օգնութեանն է դիմում և դպրանոցը բացւում է։ Դպրանոցը տեղաւորելու համար քաղաքացիներից մէկը ձրի 6 ամսով իր տունն է տալի, քաղաքի պետական դպրանոցի տեսուչ Խիտրովը յանձն է առնում ձրի վարել դպրանոցի տեսչութեան պաշտօնը և աւանդել Ռուսաց լեզու, պատմութիւն և աշխարհագրութիւն, նոյնպէս ձրի։

Դպրանոցի հետագայ կեանքի մասին մինչև 1860 թիւը լրիւ տեղեկութիւններ չըկան. երևում է, որ ունեցել է 2 դասարան, եղել է առաջնորդի և կոնսիստորիայի անմիջական հսկողութեան տակ. պահւել է թեմական եկամուտներով ու ժողովրդի նւէրներով. այսպէս շարունակւում է, մինչև որ Մատթէոս կաթուղիկոսը յատուկ կոնդակով դպրանոցի համար հաստատում է առանձին հոգաբարձութիւն։

—

1859 թւին Շուշու հայ հասարակութիւնը պատգամաւոր է ուղարկում Համբարձում աղա Հախումեանին խնդրելու կաթուղիկոսին որ հոգաբարձութիւն նշանակէ։ Վեհափառը ժողովրդի խնդիրը յարգում է և 4-ն դեկտ. 1859՝ թ. № 284 կոնդակով, գովելով ժողովրդի ցանկութիւնը, պատւիրում է ընտրել 4 վկայւած և ուսումնասէր մարդկանց, որոնք պէտք է մշակեն Տփխիսի Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութեան կանոնադրութեան նման մի կանոնադրութիւն, ուղարկեն իրեն, որ այդ Սինոդի հետ խորհրդածութեան առնելով հաստատէ և ապա ուղարկի գործադրութեան։ Կազմւում է այդ կանոնադրութիւնը «Յօդուածք նախասահմանական կանոնաց վասն ներքին և արտաքին կառավարութեան Հոգաբարձութեան Հ. Դ. Ղարաբաղու» 20 յօդւածներից բաղկացած։ Վեհափառը հաստատում է այդ կանոնադրութիւնը, որը և ժամանակաւորապէս գործադրւում է։

1860 թ. յունւարի 24—ին Դանիէլ Վ. Շահնազարեանի կազմած ժողովում Շուշում ընտրւում են 5 հոգաբարձուներ, որոնք են՝ 1, Աբրհամ բէկ Մադաթեան, 2) Համբարձում աղա Հախումեան, 3) Աբրահամ Խանդամիրեան, 4) Սարգիս Մաղաթեան և 5) Նուխի քաղաքացի Յովհաննէս Էլչիբէկեան. ընտրւում են նաև 5 անձնափոխանորդներ։ Ապա 2 հոգու՝ Բաբա Բէկլարեանին ուղարկում են կաթուղիկոսի մօտ խնդրելու, որ դպրանոցի եկամուտների աղբիւրները աւելացնէ։ Վեհափառը յարգում է այդ խնդիրը, աւելացնում է եղածի վրայ նաև՝ սրբագրամ արդիւնք և ամբողջ թեմի մոմավաճառութեան կրպակի արդիւնքը, որը հոգաբարձութեան մշտընջենական տեսչութեանն է յանձնում։ 1860 թ. յունիսի 15-ին Մատթէոս կաթուղիկոսը № 322 կոնդակով հաստատում է նորընտիր հոգաբարձութեան անդամնիրին, պատւիրելով, որ դպրանոցի տարեկան ել և մուտքի մասին ամեն տարի հաշիւ ներկայացնեն հոգևոր ատեանին։ Դպրանոցի եկամտի հաշիւներից երևում է, որ 1860—1865 թ. դպրանոցի եկամուտների աղբիւրներն եղել են՝

1) Մոմավաճառութեան արդիւնք. 2) հոգևոր տեսչութեան տւած ծննդեան և արձակման վկայականներից. 3) աշակերտների ծնողներից ստացւած նւէրներ. 4) Շուշու գաւառի ուխտատեղիներից. 5) Գանձասարի վանքի անունով եկած գանձանակագրամներ. 6) գանձանակագրամ Շուշու քաղաքի եկեղեցիներից յօգուտ դպրանոցի. 7) գիւղականներից ստացւած գանձանակագրամ. 8) վանքերի կալւածներից չոփբաշի և բահրա արդիւնք. 9) Շուշու գաւառի և քաղաքի պսակներից ստացւած նւէրներ. 10) Շուշու գաւառի և քաղաքի ամեն մի գերդաստանից ստացւած 20-ական կոպէկ սրբագրամ. 11) Շուշու գաւառի և քաղաքի քահանաներից մի մի ռուբլի սրբագրամ. 12) մի քանիսներից ստացւած առանձին նւէրներ. 13) դպրոցապատկան զումարի տոկոս և կոպէկագրամ արդիւնք. 14) հոգևոր կոչումն ընդունողներից նւէրներ. 15) զանազան գրքերի վաճառումից արդիւնք. 16) Ամարասի վանքի կալւածներից այգիտեղի ստացողներից լուսագին կոչւած արդիւնք. 17) Ղարաբաղի վիճակի հոգևորականներից ստացւած տուգանագրամներ. 18) Շահվերդեանի ընծայած Բաքւի կրպակի վարձ և այլն։

Պէտք է նկատել, որ մի ժամանակ հոգաբարձութեան հսկողութեան են յանձնւում թեմի վանքերի կալւածների եկամուտները. այս հսկողութիւնը շարունակւում է մինչև 80-ական թւականները, երբ ժամանակի առաջնորդ Կարապետ եպ. Այվազեանը ինչ ինչ անախորժութիւններ և ընդհարումներ ունենալով հոգաբարձութեան հետ, դիմում է կաթուղիկոսին և իրաւունք ստանում, որ վանքերի կալւածների եկամուտների հսկողութիւնը կոնսիստորիային յանձնւի։

Դպրանոցի եկամուտները մեծ մասամբ պատահական, անհաստատ են եղել, ուստի և զանազան ժամանակներում այդ աղբիւրներից մի քանիսը ցամաքել են, մի քանիսը աւելի քչացել։ Դպրանոցի ծրագիրը ժամանակի ընթացքում փոփոխութիւնների է ենթարկւել համապատասխան ժամանակի պահանջների։

Դպրանոցում հետզհետէ հիմնւել է գրադարան, որը ժամանակի ընթացքում թէ հոգաբարձութեան, թէ դրսի նւիրատուների օժանդակութեամբ մեծացել է. նոյնպէս հիմնւել է ֆիզիքական կաբինետ։

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տիգրան Նազարեան

ՏԱՐԱԶ

Rédacteur en chef et Directeur

Tigran Nazarian

ԹԻՖԼԻՍ № 7—8 ՅՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՍ XXIV—1913 Tiflis

LXXV-ԱՄԵԱԿ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ

Յօբելեար Դպրանոցը իր սաներով

Յատկապէս ՏԱՐԱԶԻ համար լուսանկարեց Բաբգէն վարդապետ։

ԲԱՑԱՐՁԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ

LI.

Ողջոյն և բերկրանք Բագրատունեաց շառաւիղ Իշխան Բաղդասար Միտրոպոլիտ Հասան-Ջալալ Տօլայի ղարաբաղցիներին թողած իր ժառանգ, հայրենի կենսարար ժայռին թառ Ղարաբաղի լուսատու Կոթող Հոգեւոր-Ազգային Յօբելեար Դպրանոցին։

Յարգանք և պաշտամունք հազարամեայ Բագրատունեաց Տան զարմ Բաղդասար Միտրոպոլիտի սուրբ յիշատակին և բոլորեցունց նրանց, որոնք 1838 թ. մինչև այսօր ընծայեցին իրանց բարոյական, մտաւոր, ֆիզիկական ու նիւթական կարողութիւնները հայութեան զարկերակ Ղարաբաղի Յոբելեար Դպրանոցին։

Եւ թող Ղարաբաղի Յոբելեար Ազգային Թեմական Դպրանոցը յաւերժ ցոլէ ճշմարտութեան ու գիտութեան պայծառ ու կենսատու լոյսը, փայլուն ճաճանչները սփռելով Ղարաբաղի սահմաններից էլ շատ-շատ հեռու։



ԻՇԽԱՆ ԲԱՂԴԱՍԱՐ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ 1838

ՄԵԾՆ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ-ՏՕԼԱՅ 1913



ՀԻՄՆԱԴԻՐ ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ

ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԳԱՅԻՆ-ՀՈԳԵՒՈՐ ՅՈԲԵԼԵԱՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ հիմնադիր Տ. Բաղդասար Միտրոպոլիտը Արցախի և Սիւնիքի մինչև մեր օրերը հասած հայ իշխանական ցեղերից ամենահին Ջալալեանց ազգատոհմիցն է։ Սկզբնաւորութիւնը առնում է Բագրատունեաց նախարարութիւնից՝ Սմբատ Խոստովանողի որդի և Աշոտ I-ի եղբայր Սահլ իշխանից։ IX դարից մինչև XVII-րդ դարը Ջալալեանց տոհմը տուել է ազգին նշանաւոր իշխաններ, կաթուղիկոսներ, քաջարի գործիչներ, պահել-պահպանել է Աղուանից կաթուղիկոսութիւնը և նրան աւելի մեծ շուք ու հռչակ տուել, մանաւանդ, երբ կաթուղիկոսական աթոռը փոխադրուել է Գանձասար։ Այդ կաթուղիկոսներից անուանի են եղել՝ Տ. Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Ա., ՄԱՏԹԷՈՍ, ՇՄԱՒՈՆ, ԱՐԻՍՏԱԿԷՍ, ՍԱՐԳԻՍ Ա., ԳՐԻԳՈՐ, ԵՐԵՄԻԱ, ԵՍԱՅԻ, ՅՈՎՀԱՆՆԷՍ Բ. և ՍԱՐԳԻՍ Բ., որով և վերացուեց XVIII-րդ դարում Աղուանից կաթուղիկոսութիւնը։

Բաղդասար Միտրոպոլիտը XVIII-րդ դարում նշանաւոր իշխան Մելիք-Բէգ Հասան Ջալալ-Տօլայի թոռն է։ Հայրը՝ իշխան Դանիէլ, մայրը՝ տիկին Հռիփսիմէ։ Ծնուել է 1775 թ. յունուարի 12-ին Խաչէնի Գանձասար աւանում և մկրտուել Գանձասար վանքում։ Կնքահայրը ժամասաց մականուանեալ Յակոբ եպիսկոպոսն է եղել, իսկ մկրտողը Տոփեանց Աթանաս եպիսկոպոսը։ Մանկութիւնը անց է կացրել Գանձասարում, ուսումն ու կրթութիւնը ստացել է իր հօրեղբայր Սարգիս արքեպիսկոպոսից (կաթուղիկոսից)։ Սէր ունենալով կուսակրօնութեան, թողնում է իշխանական կենցաղը և նուիրւում Գանձասարի տաճարին, վայելելով, իր հեզաբարոյ, առաքինի բնաւորութեան շնորհիւ, ամբողջ միաբանութեան սէրն ու գգւանքը։ Աստուածային պարգև էր համարւում պատանի Բաղդասարի ձայնը, և նրա ներդաշնակ երգեցողութիւնը մեծ շուք էր տալիս եկեղեցուն։

Հազիւ տասը տարեկան էր, երբ Իբրահիմ-խանը սկսել էր տակնուվրայ անել Ղարաբաղը, և Յովհաննէս կաթուղիկոսի մօտ 1785 թ. ժողովւելով հայոց Արցախ աշխարհի մելիքները, խնդրագիր գրեցին Եկատերինէ Կայսրուհուն ռուսաց պաշտպանութիւնը հայցելով և սերայօժար իրանց բախտը միացնելու ռսի հետ։

Իբրահիմ-խանը, տեղեկանալով կաթուղիկոսի և մելիքների իր դէմ դաւադրութիւնը, աւելի ևս է սաստկացնում իր բռնութիւնները։ Յովհաննէս կաթուղիկոսին սպանում է, կալուածքները յափշտակում, մելիքները ցաք-ցրիւ են լինում։ Սարգիս արքեպիսկոպոսը Գանձասարի հարստութիւնները թաքցնում է և իր եղբայր իշխան Դանիէլ-Բէգի և նրա որդի Բաղդասարի (Միտրոպոլիտի), վանքի միաբանութեան և մի քանի ընտանիքների հետ 1792 թ. փախչում է Գանձակ, ուր Ջաւադ-խանը մեծ պատւով ընդունում է սրանց և Մելիք-Մեջլումի ու հայ իշխանների միջնորդութեամբ Ջաւադ-խանի հրամանով Սարգիս արքեպիսկոպոսը ձեռնադրւում է կաթուղիկոս Աղուանից։

Վեց տարի Գանձակ մնալով, Բաղդասարը հէնց այստեղ էլ 1796 թ. ձեռնադրւում է սարկաւագ։ Ջաւադ խանի խնդրով էլ, որ զմայլած Բաղդասարի ձայն ու երգով, միշտ յաճախում էր հայոց եկեղեցին, 1798 թ. իր հօրեղբայրը՝ Սարգիս կաթուղիկոսը ձեռնադրում է նրան քսաներկու տարեկան հասակում վարդապետ։

Ռուսների Գանձակ ու Ղարաբաղ գալու լուրերը լսելով, Բաղդասարի հայր իշխան Դանիէլ-բէգը վերադառնում է Գանձասար կալուածքն ու հարստութիւնը կարգի բերելու, բայց ընկնելով Իբրահիմ-խանի ձեռքը, անխնայ տանջանքներ ստանալով նրանից, սպանւում է։

Սարգիս կաթուղիկոսը ենթադրելով, որ փոթորկի յորձանքը կարող է և իրենց էլ հասնել, մանաւանդ որ Ջաւադ-խանը բաւական թուլացել էր, անցնում է Թիֆլիս Բաղդասար վարդապետի և իրայինների հետ։ Մեծ պատւով ընդունւում է վրաց Հերակլ թագաւորից։ Բայց կարճ ժամանակից յետոյ Հերակլ թագաւորը մեռնում է, սակայն կտակելով իր գահաժառանգ Գէորգուն խնամք տանելու իրան ապաւինածներին։ Եւ Գէորգի թագաւորը սրբութեամբ կատարում է հօր կտակը, ս. Էջմիածնայ Մայր Աթոռի Գահակալ Ամենայն Հայոց Ղուկաս կաթուղիկոսին խնդրելով Հաղպատու առաջնորդութիւնը տալ Աղուանից կաթուղիկոս Սարգիս արքեպիսկոպոսին։ Թէև սկզբում շատ իրաւացի մերժում է Գէորգի թագաւորի միջնորդութիւնը, բայց

ԼԵՌ-ՋԱՅ

Դուտխու Քեալբաշար.

Ղարաբաղի Ազգային Հոգևոր Դպրանոցի կալուածք։

ի վերջոյ կատարում է, երբ Սարգիս կաթողիկոսը գնում է ս. Էջմիածին։ Անա այստեղ Ղուկաս կաթողիկոսը լսում է և նրա եղբօրորդի Բաղդասար վարդապետի աքանչելի ժամասացութիւնը և, հակառակ իր սովորութեան, Տաճարում մնում մինչև ժամասացութեան վերջանալը և հէնց այնտեղ էլ պարգևատրում ու գցում է Բաղդասար վարդապետի վրայ մետաքսեայ շատ թանգագին ծաղկեայ փիլոն և պատուիրում Սարգիս կաթողիկոսին շնորհել նրան ծայրագոյն վարդապետի աստիճան, որ և ստանում է Բաղդասար վ. Հաղբատում 1802 թ.։

Իբրահիմ-խանի սպանուելուց յետոյ Բաղդասար ծ. վ. մի քանի մելիքների հետ վերադառնում է Գանձասար 1808 թ. յուլիսին։ Վրաստանի ռուսաց զօրքի հրամանատար իշխան Օրբելիանին հրամայում է Ալեքսէև Ղարաբաղի կառավարչին շուքով ընդունել Բաղդասար ծ. վ. և կնեազ (իշխան) Գրիգոր Հասան-Ջալալեանցին ու տալ նրանց ճանապարհին երկու ղազախ։

Բաղդասար ծ. վ. հայրենի երկիրը գտնում է աւեր։ Վանքը կիսակործան, դռները այրուած, կալուածները զանազան բէգերից յափշտակուած։ Սակայն անվհատ ձեռնարկում է վերաշինութեան և ամեն ճիգ թափելով, չորս տարի բէգերի հետ վէճ տանելով, յաղթանակում է։ Ղարաբաղի Մեհտի-Ղուլի-խանի հետ բարեկամանում է և նրա օգնութեամբ ցաք ու ցրիւ ժողովուրդը հաւաքում, ամայի երկիրը նորից շէնացնում ու պայծառացնում։ Ապա հօրեղբօրը՝ Սարգիս կաթողիկոսին հրաւիրում է հայրենիք, որը տասը տարի Հաղբատում մնալուց յետոյ. գաղթած իւրայիններով վերադառնում է 1812 թ. Գանձասար և իբրև կաթողիկոս Աղւանից բազմում իր գահին։

Ս. Էջմիածնայ Մայր Աթոռի Գահակալը սակայն այլևս չէ ընդունում Աղւանից կաթողիկոսութիւնը և, ռուս կառավարութեան աջակցութեամբ, խլում է նրանից կաթողիկոսական տիտղոսը, փոխարէնը տալով միտրոպոլիտութեան տիտղոս, ճանաչելով նրան իբրև սոսկ արքեպիսկոպոս։ Սրանով վերջանում է նոյնիսկ I դարում Թադէոս առաքեալի աշակերտ ս. Եղիշէի ձեռքով հիմնուած Աղւանից կաթողիկոսութիւնը։

Սարգիս միտրոպոլիտը Բաղդասար ծ. վ. իր եղբօրորդուն ուղարկում է ս. Էջմիածին, ուր նա 1820 թ. սեպտ. 18-ին ձեռնադրւում է եպիսկոպոս և առժամանակ մնում այնտեղ։ Վերադառնալով Գանձասար, հօրեղբօրը գտնում է արդէն ուժասպառ և ծերացած, փոխարինում է նրան, կատարելով յանձնարարութիւնները։ 1828 թ. վախճանւում է Սարգիս միտրոպոլիտը և Արցախի ու Աղւանքի մելիքները, ժողովուրդը Եփրեմ կաթողիկոսին խնդրում են Բաղդասար եպիսկոպոսին միտրոպոլիտ նշանակել, որը և կատար է ածւում 1830 թ. ս. Էջմիածնում։

Բաղդասար միտրոպոլիտը վերադառնալով Գանձասար, նախ ճանապարհն է սկսում իր ծախսով հարթել, ապա վանքը և կաթողիկոսարանը վերաշինել։ Արցախի և Աղւանքի ժողովրդի համար Գանձասարը ոչ միայն ուխտատեղի է, այլ և վերին դատարան։ Ապա շրջակայ վանքերն է կարգի բերում, ընդարձակում իր իշխանութեան սահմանները, աւելի քան 30 հազար դեսեատին վարելահողեր և անտառներ, իր սեպհական հպատակներից 150 հոգի ընծայում է Գանձասարին և նրանց բնակեցնում նոյն անունով գիւղում։ Կառուցանում է երկյարկանի առաջնորդարան և սենեակներ միաբանութեան համար։

1836 թ. Պոլօժենիան հաստատուելուց յետոյ Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսից կանչւում է ս. Էջմիածին, երդւեցնւում և ուղարկւում Շուշի, իբրև թեմական առաջնորդ Արցախի։

Գործերը կարգադրելով Գանձասարում, թողնում է միաբանութիւնը այնտեղ և 1837 թ. վերջնականապէս տեղափոխւում Շուշի։

Շնորհիւ իր վեհանձն բնաւորութեան և կենցաղի, շատ շուտով գրաւում է տեղացի մեծամեծների, ժողովրդի և պետական պաշտօնեաների սէրն ու յարգանքը։ Զը խնայելով ոչ մի ջանք և նիւթական զոհաբերութիւն, Մեհտի-Ղուլի-խանի աղջկանից և ուրիշ բէգերից խլում է իր իշխանական կալուածքները, որ ընդհանուր առմամբ Դուտխու Քեալբաշար է կոչւում և որը տարածւում է հարիւր քառասուն հազար դեսեատին մի շարք գիւղեր, կուսական անտառներ, հանքեր, վարելահողեր, մարգեր, արօտատեղեր, լի հանքային զանազան ջրերով։

1840 թ. իր սեպհական ծախքով Շուշում կառուցանում է եռայարկ հոյակապ առաջնորդարան, պարըսպապատ պարտէզով։ Այս շինութիւնն աւարտւում է 1843 թ.։

Անա և Հոգևոր Ճեմարանը (Հոգեւորական շկօլը) բացուած ու Բաղդասար միտրոպոլիտը իրան ժառանգ է համարում այդ լուսատու փարոսը Ղարաբաղի և կտակում նրան իր իշխանական միլիօն րուբլիներ արժեցող կալուածքները։ Ամարասում ընդարձակ այգի է գցում և արդիւնքը նոյնպէս յատկացնում Հոգեւորական շկօլին։ Ժողովրդից ստացւող տուրքերը, իրան մատուցւող աջահամբոյրները, բոլորը, բոլորը նուիրաբերում է Թեմի նորաբաց դպրանոցին։ Առաջնորդարանի դիմաց

ընդարձակ գետին է վերցնում եկեղեցի և դպրոցական շէնք կառուցանելու համար, սակայն այդ մտադրութիւնը դեռ չիրականացրած, հիւանդութիւնը՝ յօդացաւը աւելի ես սաստկանում է, և նա միայն հնարաւորութիւն է ունենում իր հիմնած տպարանը տեղափոխել իր կառուցած առաջնորդարանի շէնութիւնը, Գանձասարի գեղեցկաշէն գմբեթի կտուրը հիմնովին նորոգել: Վախճանւում է 1854 թ. յունիսի 27-ին ութսունամեայ հասակում: Ամբողջ Ղարաբաղը խորասուզւում է վշտի մէջ: Շուշեցիների և գանձասարցիների մէջ վէճ է սկսւում մարմինը ուր ամփոփելու համար: Ութ օր նշխարները եկեղեցական թափորով քաղաքի բոլոր եկեղեցիներն են պտտեցնում, ուր վերջին հրաժեշտի որդիական աջահամբոյր է տալիս ամբողջ քաղաքի մեծ ու փոքրը: Համաձայն կտակի, շուշեցիք զիջանում են աճիւնը գանձասարցիներին և Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեան Արցախի համայն հոգևորականութիւնով շրջապատուած, Շուշու հայոց բոլոր, նոյնիսկ ռուսաց, եկեղեցիներում հանդիսաւոր պատարագներ անելուց յետոյ, արքայավայել շուքով նշխարները տարւում են Գանձասար: Շուշում ամբողջ ազգաբնակութիւնը՝ հայ, թուրք, ռուս ներկայ է լինում յուղարկաւորութեան: Զօրքը զինուորական պատիւներ է անում: Հարիւրաւոր ձիաւորներ, Ղարաբաղի բոլոր մելիքները, իշխանները, բէգերը, ժողովուրդը, գիւղացիները մասնակցում են յուղարկաւորութեան: Ճանապարհին դագաղի առաջ հարիւրաւոր ոչխարներ է մորթում ժողովուրդը: Թէ Շուշում, ճանապարհին, և թէ Գանձասարում փառաւոր սեղաններ են բացւում յուղարկաւորողների և ժողովրդի համար:

Գանձասարում հանդիսաւոր պատարագից յետոյ նշխարները ամփոփւում են վանքի հռյակապ գմբեթում, իր հօրեղբայրների՝ Յովհաննէս կաթուղիկոսի և Սարգիս միտրոպօլիտի գերեզմանների կողքին:

Մարմարիոն շիրիմի վրայ փորագրուած է՝

Այս է տապան Միտրոպօլիտին
Բաղդասարայ Մեծի Արհին
Կայսերապատկ Հովուապետին
Ցանս Աղուանից Հայոց Ազգին,
Ծագզէ Ջալալ Մեծ Իշխանին
Տեառն Արցախական աշխարհին:
Թուին ՌՅԳ. 1854 յուլիս 9.

—

*) Մուրացանը Փորձում մանրամասն նկարագրած ունի Բաղդասար Միտրոպօլիտի տոհմագրութիւնն ու կեանքը, որից և կազմեցինք ներկայ կենսագրականը:

Տարաբախտաբար չըկայ Բաղդասար Միտրոպօլիտի ոչ ձիթանկար և ոչ այլ կերպ նկարուած պատկերը: Ութսունամեայ մայրս (Զարուհի Նազարեան) պատմում է՝

Բաղդասար Միտրոպօլիտը այցելում էր իր ժողովրդին: Նա նիհար էր. երեսը փոքր; դեղնած և ոտները անդամալոյծ: Իր երկու սպասաւորները՝ գաւազանակիր տիրացու Աղամը (Բէյլուբէկեան) և աշխարհական Սարգիսը անբաժան էին նրանից. ինչպէս և իր ազգական Գրիգոր Հասան-Ջալալեանցը: Մեծ խնճոյքներին, ժամահացերին ժողովրդի տունը շնորհ էր բերում Միտրոպօլիտը: Դահլիճի ամենապատուաւոր տեղը կէս արշին բարձրութեան փափուկ անկողին էր պատրաստւում նրա համար: Բազկաթոռով բերում էին և նստացնում անկողնում, որի շուրջը գետնի վրայ մի քանի շարք սփռոցները շրջապատում էին հրաւիրեալները: Պերճախօս էր. խօսում էր Խաչէնի բարբառով: Ժողովրդի համար նա ոչ միայն հոգևոր հայր էր, այլև ընտանիքի հայր, դատաւոր-նոյնիսկ թիւրք խաներն ու բէգերը խոնարհւում էին նրա ճշմարտասիրութեան ու արդարադատութեան առաջ, ակնածութեամբ, սիրով էին ամենքը լսում, կատարում Միտրոպօլիտի խօսքն ու ցանկութիւնները:

Իր կառուցած դպրոցի և առաջնորդարանի համար էր ծախսում ստացած աջահամբոյրները:

S.

Ղարաբաղցի աշուղը ժայռերի մէջ.

ԺԱՅՌԸ ՀԱՅՐԵՆԻ

Այդ բարձունքներում միշտ հսկայ, միշտ վեր,
Դու կաս, կը մնաս, ժայռ իմ հայրենի,
Պառաւ, խորշոմած ճակատդ անվեհեր
Դէմ արած հուժկու փոթորիկների:

Հին-հին դարերի կենդանի վկայ,
Դու յաւերժ ընկեր թուղպ ու ամպերի,
Մռայլ հայեացքդ յառած դէպ հեռուն,
Տանջւում ես վշտով քո զաւակների:

Օ, ժայռ հայրենի, օտար աշխարհից
Քեզ այց եմ եկել սրտով կարօտած,—
Ու. ահա իմ մէջ յուզւում են նորից
Մանուկ օրերի յուշերն անդարձ...

Ողջոյն քեզ, չքնաղ երկիր հարազատ,—
Երազանքներիս օրրան մշտատև.
Ի՜նչ սիրուն ես դու, ինչ անոյշ, ազատ,
Ի՜նչ գեղեցիկ ես, հայրենի արև:

Օ, թող ալևոր ճակատդ հսկայ
Սիրով համբուրեմ, ժայռ իմ հայրենի,—
Դու կաս, կը մնաս միշտ յաւէտ վկայ
Մարդու հէգ կեանքի փոթորիկների...

Շուշի 1913. Կոստ. Կրասիլնիկեան

ՂԱՐԱԲԱՂԻ ՅՈԲԵԼԵԱՐ ԴՊՐԱՆՈՑԸ ԽԱՆՁԱՐՈՒԻ ՄԷՋ

№ 945/469 ստացաւ ի 14 նոյ. 1838,— **ԳՐՍՏՃԷՆ** (Բնագիրը Ս. Էջմիածնայ Սինոդում)

(Արտագրուած բնագրից եւ ուղղագրութիւնն անփոփոխ պահպանուած)



† ՎԱՐԺԱՊԵՏ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐ
ա. ք. ՏԷՐ-ԱԻԱԳԵԱՆ
Անդրանիկ աւագ ուսուցիչ Ղարաբաղի Հոգեւոր Ճեմարանի
1839—?

† ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա. ք. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Անդրանիկ տեսուչ Ղարաբաղի Թեմ. Դպր. (1862)

Ի Լուսաւորչական Հայոց Սրբազան Սիւնհոդոսն Էջմիածնի,—

Ի Վիճակաւոր Առաջնորդէն Ղարաբաղու—

յայտարարութիւն.—

Ուսուցիչն Հայոց լեզուի 'ի յԱրքունի քաղաքական Վարժարանին Շուշւոյ-բերդաքաղաքի՝ Աւագ-Սարկաւագն Սբ. Ածածնայ եկեղեցւոյն Ագուլեաց, որ ի բերդաքաղաքիս, Տիրացու Գրիգորն Տր-Աւագեանց խնդրով իւրով, զոր մատուցեալն է ինձ ի 15—Հոկտեմբերի այսր ամի, խընդրէ ընկալանուլ և կարգել զինքն Աւագ Ուսուցիչ Հայոց լեզուի ի Հոգեւոր Ճեմարանի վիճակիս, բացելումն ի բերդաքաղաքի աստ, յարակցելով ևս առ այն, թէ՝ ըստ խորհրդոյ Ատենատպրի կանսիստօրեային Ղարապաղու Պրն Աւետիքայ Մամիկոնէի յանձն առնու նա կատարել ձրիաբար ըզպարտաւորուի այնր պաշտաման մինչև ցայնժամ, յորում պարտին տուեալ լինիլ ռոճիկք վարժապետաց Հոգեւոր Ճեմարանին այնորիկ, նշանակեալքն վս իւրաքանչիւրոց ի Հոգեւոր իշխանուէ, քաջայոյս լեալ ևս և, թէ՝ յայնժամ Հոգեւորական իշխանութին տեղւոյս տեսանելով զյառաջադիմութիւն նորա—չանսի անտես առնել զնա ի վարձատրելոյ ըստ արժանաւոյն:—

Վսյ և ես ի միասին ընդ այսմ յուղարկեալ զայն խնդիր ի Հոգեւոր-Ատեանն Ղարապաղու՝ հրամայելով, զի Ատեանն նշանակեսցէ զյիշեալ Աւագ-Սարկաւագն Տր-Աւագեանց ի պաշտօն Աւագ Ուսուցչի Հայոց լեզուի ի Հոգեւոր Ճեմարանի անդ ըստ զօրութ. խնդրագրի նորա, պատիւ ունիմ ծանուցանել զայսմանէ Սրբազան Սիւնհոդոսիդ Էջմիածնի:

Ընդ սմին նաև խնդրեմ ի Սիւնհոդոսէդ տալ ինձ զլուծումն, թէ՝ ի Հոգեւոր-Ճեմարանի անտ բաց ի տղայոց Հոգեւորականաց, կարե՞ն արդեօք ուսանիլ և որդիք աշխարհականաց:—Վս զի աստի ժողովուրդք յուսան. թէ՝ որդիք իւրեանց ևս ունին մտանել յուսումն ի Հոգեւոր Ճեմարանի անդ, ապ թէ ոչ՝ բազմաց կամք են չառնել ինչ օգնութիւն այնըմ Ճեմարանի և ոչինչ տեսակաւ:—

Վիճակաւոր Առաջնորդ Հայոցն
Ղարաբաղու և այլոց

№ 46
'Ի 22=Հոկտեմբերի 1838=ամի
'Ի բերդաքղքն Շուշի:

—



† ՆԵՐՍԷՍ-ԲԷԿ ԱԹԱԲԷԿԵԱՆ
Անդրանիկ աշխարհ. տեսուչ Ղարաբաղի Թեմ. դպր. (1862)

Սինօդը 1838 թ. Նոյեմբ. 28-ի իր նիստում լսելով Բաղդասար Միտրոպոլիտի այս յայտագիրը հետեւեալն է արձանագրում՝

Հրամայեցին.

Զայս յայտարարուի Արք Եպիսին Ղարաբաղու կցել ը գործոյն, իսկ ի մասին որդւոց աշխրհկնց տալ գիտել այնմիկ թէ կարէ ընդունել զորդիս նց ը յանկուե ծնօղացն, եթէ իցէ դատարկ տեղի ի Հոգեւոր Ճմրնին տեղւոյն և եթէ ներեսցին միջոցքն այ-

† ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ (եպիսկոպոս) ԱՂԱՓԻՐԵԱՆ
Անդրանիկ կուսակրօն տեսուչ Ղարաբաղի Թեմ. դպրանոցի (1863)

նորիկ։ (17 դեկտ. 1838 թ. № 1645 հրաման Արքեպին Ղարաբաղու)։

—

Բաղդասար Միտրոպոլիտը իր հեռևեալ № 47 յայտարարութիւնով հաղորդում է Սինոդին՝

«Մօլլա-Մամմատ Մօլլայ-Ալլահվերդիին խնդրով իւրով յանձն առու լինի նա ինքն Մօլլա Մեամմեադն զամ մի բովանդակ ծառայել ձրիաբար, բայց սակայն յետ այնորիկ տացի նմա ռոճիկ, կարգեալն ի Հոգևոր իշխանութէ վս Ուսուցչին Պարսից լեզուի»։

Եւ Բաղտասար Միտրօպոլիտը սրան էլ է ընդում իր Հոգևոր Ճեմարանում, միայն տեղեկացնելով Սինօդին, որը և իր՝

† ՄԱՏԹԷՈՍ ՀԱԽՈՒՄԵԱՆ

Տեսուչ Ղ. Թ. Դ. (1866)

Հրամայեցին

Զյայտարարուի կոնսիստորիին Ղրբզու առնել ի ծանօթութիւն Սինոդոսի, կցել ը գործոյն։

—

† ԽՈՐԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ (եպիսկոպոս) ՍՏԵՓԱՆԷ

Տեսուչ Ղ. Թ. Դ. (1871—1874)

Յոբելյանական յանձնաժողովի հրատարակած բրօշիւրում (երես 13) Գաբրիէլ ա. սարկաւագ Տէր-Աւագեանը չէ, այլ ինչպէս երևում է Սինօդում եղած պաշտօնական դօկումենտից ԳՐԻԳՈՐՆ է, որը և ճիշտ է։ Սա վարժապետ ա. քահ. Տէր-Գրիգորն է, նշանաւոր հայկաբան և Շուշւայ քահանաներից ամենասիրելին, ժողովուրդականը։ Սրա մասին մանրամասն Ղարաբաղ եւ Ղարաբաղցիներ մեայուն յուշարձանի մէջ։

Սխալ է նոյն բրօշիւրի մէջ, նոյն երեսում և մօլլա Ալլահվերդու անունը։ Ուղիղը վերև բերուած թղթից է՝ Մօլլա Մահմատ Մօլլա-Ալլահվերդի եւ տեսուչների մէջ չեն յիշուած բժշ. Բ. Աղասարեանի ու Պլեգանսկու անունները։

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄ. ԴՊՐԱՆՈՑԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՒ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

(1861 թւականից)

Դպրանոցը առաւելապէս պատահական գումարներով է պահպանւել։ Հոգաբարձութիւնը ստիպուած է եղել ժամանակի ընթացքում աշակերտների ուսման վարձն աւելացնել. սկզբներում եղել է 6 ռ., յետոյ դարձրել է 10 ռ., ապա 12 և այժմ 20 ռ. լիաթօշակ և 10 ռ. կիսաթօշակ. այն էլ ասենք, որ չքաւորների թիւը մեծ մասամբ կազմել է ընդհանուր աշակերտութեան 30—40%-ը.

Դպրոցն ունեցել է երեք պատրաստական և չորս հիմնական դասարան մինչև 1888 թ.։ Այդ թւին, 8-ին յուլիսի № 257 կոնդակով Մակար կաթողիկոսը կարգադրել է ժամանակի առաջնորդ Կարապետ եպ. Այվազեանին պատրաստականների գումնթաց բաժանումները փակել, քաղաքի եկեղեցիների մօտ ծխական դպրոցներ բանալ և դպրանոցի հիմնական դասարանների թիւն աւելացնել։ 1888/9 ուսման տարում բացւում է Ե. դասարան, իսկ 1889/90-ին Զ. դասարան, այսպէս էլ շարունակւում է մինչև այժմ։

1903 թ. դեկտ.-ին բարձրագոյն կարգադրութեամբ դպրանոցը փակւում է և 1905 թ. օգոստ.-ին բացւում։

Դպրանոցի ծրագիրը ժամանակի ընթացքում փոփոխութիւնների է ենթարկւել համապատասխան ժամանակի պահանջների։

ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

1861 աւագ ուսուցիչ Յարութիւն քհ. Մելքոնեան. 1862 » » Ներսէս-բէգ Աթաբէգեան. 1863 տեսուչ Գրիգոր վ. Աղափիրեան. 1764—5 տեսուչ Պետրոս Շանշեան, օգնակ. Պերճ Պռօշեան. 1866 պաշտօնակատար տեսչի Մատթէոս Հախումեան 1867—70 թ. տեսուչ Գէորգ Խաչատրեան. 1871—74 պաշտ. տեսչի Մաղաքիա Պլուզեան և Խորէն Ստեփանէ. 1875 պաշտ. տեսչի Սիմէօն քհ. Տէր Իսրայէլեան, 1877 տեսուչ Գէորգ վ. Սուրէնեան և Արիստակէս վ. Սեդրակեան. 1877—78 տեսուչ դոկտ. փիլ. Վասակ Պապաջանեան, 1879 բժշ. Բ. Աղասարեան, 1880—81 Սեդրաք Մանդինեան. 1881—82 Համբարձում Առաքելեան. 1882—84 Ջաւադ-բեգ Իշխանեան. 1885—87 Մովսէս Սամուէլեան. 1890—92 Եղիշէ Մադաթեան, 1892—94 նոյեմբ. Լևոն Սարգսեան. 1894 նոյեմբ.—96 Եղիշէ Մադաթեան, 1896—7 Մեսրովբ վարդ. Տ. Մովսիսեան, 1897/900 Տիրայր վարդապետ, 1900—03 Բենիկ վարդապետ, 1903/04 մինչև դեկտ. պաշտ. տեսչի Իշխան Զուրաբեան, 1904/06 տեսուչ Ներսէս վ. Միքայէլեան, 1906/07 տեսուչ Արշակ Չիլինգարեան, 1907/08 պաշտօնակատարներ տեսչի՝ Ռ. Բաջբերունի և Ա. Հայրապետեան 1908/10 տեսուչ Աւետիք Տէր-Պօղոսեան, 1910 տեսուչ Բժ. Ն. Եարամիշեան.

† ՎԱՍԱԿ ՊԱՊԱՋԱՆԵԱՆ

Տեսուչ Ղ. Թ. Դ. (1877—1878)



† ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆ

Օգնական տեսչի Ղ. Թ. Դ. (1864—1865)

ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԱԿԱՆ ՅՈԲԵԼԵԱՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՏԵՍՈՒՉՆԵՐԸ

ՍԵԴՐԱՔ ՄԱՆԴԻՆԵԱՆ
(1880—81)



† ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆ
(1883)

† ՋԱԻԱԴ-ԲԷԿ ԻՇԽԱՆԵԱՆ
(1882, 1884, 1888—90)



ԲԺՇ. Բ. ԱՂԱՍԱՐԵԱՆՑ
(1879)

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼԵԱՆ
(1881—82)

ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ
(1900—03)

ԵՂԻՇԷ ՄԱԴԱԹԵԱՆ
(1890—92, 1894—96)

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ
(1892—94)

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Չը նայած մեր ջանքերին անկարող եղանք առայժմս գտնել մեր ունեցած լուսանկարների հաւաքածուի մէջ հանգուցեալ Դալուստ Վ. Փափազեանի եւ Մաղաքիա Պլուզեանի լուսանկարները, անշուշտ սրանց պատկերները կը տպագրուին Տարազի հետեւեալ №-ում Ղարաբաղի Թեմական Դպրանոցի յոբելեանական հանդիսի պատկերների հետ։ Այդ №-ում կը զետեղուեն և Յոբելեար Դպրանոցի 1912/12 Թ. ուսուցչական խմբի, տեսչի, ինչպէս և ներկայ №-ում չը մտած մի քանի նախկին տեսուչների ու նշանաւոր ուսուցիչների և աշակերտների պատկերների շարունակութիւնը։

Շուշի. հայ-թուրքական աւերումից յետոյ.

Յատկապէս Տարազի համար լուսանկարեց Բաբգէն վարդապետ։

ԱՒԵՐԱԿՆԵՐ

(Ետիւդ)

(Նուէր Ղարաբաղի Թեմական Դպրանոցի LXXV-ամեայ Յոբելեանին)

Լուսեղէն շողերի տակ՝ լուռ կանգնած են նրանք՝ այդ խորհրդաւոր բեկորները անցեալի։

Փայլուն աստղերով պճնուած գիշերը ընդգրկում է նրանց, ոսկի պաճուճանքով զարդարում։ Մամռապատ պատերի արանքներից քամին սուլում է, երգում աղեկտուր, ու այդ երգը տանջանքի հառաչքի նման է հնչում մեղմիկ լեռնային օդի ծոցում։ Թաւ ամպերը սահում են՝ լազուարդ երկնակամարի տակ օրօրուելով, սքօղելով լուսնի դէմքը, աստղերի հոյլքը։ Նրանց ծնած խաւարից ստուերներ են յղանում, ստուերներ են ցրւում։ Բեկորները անցեալի՝ այդ տխուր վկաները՝ մռայլ, ամեհի հսկաների են նմանում, սակայն թևազուրկ, սակայն քարացած իրենց վշտի մէջ։

Սգաւոր նոճիները նւում են, ու նրանց քնքոյշ սօսափիւնի մէջ՝ թւում է՝ ռումբերի հեռաւոր պայթիւն է որոտում, հրացանների ճայթիւն է հնչում, յաղթողի հրճւանքը, տանջանքի ճիչը... Հրակէզ լեզուներ են երկինք բարձրանում, հրդեհում երկինքը արնագոյն բոցով... Մեր մտաւոր աչքերի առաջ անցնում են ցաւալի տեսարանները, ահեղ էջեր... Դարաւոր Ոխը մեկնեց իր սգաւոր թևերը։ Աւերման Ոգին, դարերի ընթացքում կենդանի, անյաղթ—եղաւ այդ անկիւնում, կատարեց իր մռայլ գործը...

Նոճիների սօսափիւնը դալուկ բողոք էր մարդկային գռեհիկ մտքի դէմ, վայրենի բնազդների...

Լուռ, անձայն դեգերում էինք մենք այդ ամեհի անկիւնում, կարծես վախենում էինք մարդկային հնչիւններով խոեմացնել այդ խորհրդաւորութիւնը, ցրել ստուերները։

Լսեց թեթև ոտնաձայն։ Կիսախաւարի մէջ թոյլ նշմարեց մի ուրւագիծ...

Ուրւակա՞ն էր դա—ծնուած այդ մռայլ վայրի ծոցին, թէ կենդանի մարդ, որին կեանքը զրկել էր կենդանի պատկերից։ Հերարձակ այդ արարածը՝ ցնցոտիների մէջ փաթաթուած—կորացած մէջքով՝ ինչ որ իրերի հետքեր էր որոնում, ինչ որ կորցրած թանգագին էակ էր փնտռում... Նրա խոր ընկած աչքերն այնքան մռայլ էին փայլում, որքան և այդ կործանուած վայրը... Խուլ ձայնը հնչում էր տարօրինակ՝ կարծես խոնաւ գերեզմանների խորքից էր բարձրանում.

—Ծաղիկ,—կանչում էր նա աղիողորմ...

—Ծաղիկ, աղջի, եկ, եկ—մայրդ քեզ կարօտել է, կարօտել է սիրուն դէմքիդ, վառ աչքերիդ...

Յանկարծ ուժասպառ ընկաւ մի անկիւնում, մեկնեց ոտները ու ողբաձայն սկսեց երգել.

—Ես մի աղջիկ ունէի, լուսնեակ-աղջիկ... Ո՞ր գազանը նրան տարաւ... Հուր-կրակը տունս կլանեց և իմ աղջիկն էլ հետը տարաւ... Ասլան-տղայ, ո՞րտեղ ես, քո նշանածը ղըղին տարաւ... Ո՞վ է տեսել իմ աղջիկը՝ շարմաշող, լուսնի շող...

Սևագոյն շրթունքներից բառերը թռչում էին կցկտուր։ Արձագանգը կրկնում էր նրանց աղիողորմ...

Լուսինը ազատեց ամպերի գերութիւնից, կաթնա-

† Պետրոս Ծանշեան

Տեսուչ Ղարաբաղի Հ. Ա. Հ. Դպրանոցի

Թոյլ շառաւիղներ սփռեց։ Լազւարդ եթերքում հալւեցին մռայլ, սուերաշատ ամպերը…

—Ո՞վ է այս կինը։ Կարծես ուրուական լինի։ Դարերի խորքից եկել է յիշեցնելու անցեալը,—հնչեց կանացի մի նուրբ ձայն։

† Արիստակէս արքեպ. Սեդրակեան

Ղարաբաղի Թեմ. Առաջնորդ

—Սրանք գեղեցիկ են ու խորհրդաւոր,—կրկնեց կինը,—թէև մեռած կեանք են յիշեցնում, սակայն կեանք…

—Այստեղ մահն էր սաւառնում,—արտասանեց երկրորդ ձայնը։

Գուցէ նոյն տեղը, ուր մենք պէտք է բնակւենք —և սիրել են և տանջւել… Եւ այս հերարձակ կինը այս անկիւնի տխուր ոգին է, որին կարծես ծնել է գիշերը, խաւարը,—երջանիկ կին է եղել երբեմն, երջանիկ մայր։

—Ցաւալի է դիտել աւերումը,—տխուր արտասանեց երիտասարդը։

—Բնութիւնը սիրում է նորանոր, գերագոյն ձևեր։ Աւերման մէջն է թագնւում վերածնութեան ոգին։

—Բայց այստեղ բնակւե՞լ, ուր ուրւականներ են շրջում…

—Մեր տան սիւները կը ներկենք վարդերանգ գոյներով ու մեր պարտէզում շուշանը ու մեխակը կը փռւեն…

—Նորիկ, դու իմ ոգևորութիւնն ես…

Նրանց ձայները հնչում էին զւարթ ու առոյգ, ու երիտասարդ խանդ էր ցոլում նրանց հրաշեայ դէմքին…

Գիշերը նման էր լարաւոր գործիքի։ Ամեն մի հնչիւն արձագանգում էր նրբութեամբ։

† Համբարձում-աղա Հախումեան

Հովանի, ոգի և պաշտպան Ղարաբաղի Թեմական Դպրանոցի

Անցեալի այդ մռայլ բեկորները կերպարանափոխւում էին։ Երիտասարդ յոյսը վարդավառում էր տեսարանը։ Հերարձակ կինը՝ խելագարի յատուկ զգայնութեամբ ըմբռնեց այդ նոր միտքը։ Արագութեամբ բարձրացաւ տեղից, մօտեցաւ գողտրիկ կոյսին, նայեց նրա շողակաթ աչերին ու ժպտալով սկսեց գուրգուրել.

—Վերջապէս եկար… Վաղուց էի քեզ սպասում, շատ վաղուց… քո նշանածը երկրէ-երկիր ընկաւ, վերջապէս քեզ ինձ մօտ բերաւ—իմ Ծաղիկ, իմ լուսնեակ-աղջիկ…

Ու կարօտ շրթունքները ջերմ սեղմեց օտար դէմքին։

Երիտասարդ վառ դէմքերը ժպտում էին բարձունքից նայող ոսկի աստղերի նման…

Վեհապանծ նոճիները՝ լուսնի արծաթ-շողերի տակ մեղմիկ սօսափում էին—սիրոյ ու կեանքի օրհներգը նւագում…

Շուշի Կարինէ

ՖԵԼԵՏՕՆ

ԻՄ ԱՉՔԻ ԼԻՒՍ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑ

Հին շինութիւնը. կառուցանող Բաղդասար Մետրոպոլիտ։

Առաջ ու տռաջ հազար ներողութիւն ըմ խնթըրըմ ծըզանայ, վէր իմ կեանքին պըտըտիւսված վախտը՝ Ղարաբաղան գեադարգին ընկնելաւ, պառաւութունն էլ եր կուխելաւ՝ վըննըծեռքայ ընկալ ըմ, վէչ կարըմ ըմ զուռնաս փչիմ, վէչ տմըլիս կուպըննէն տիւրիւր տամ իմ սրտի ու մտքի խուխուրթը ծըեղ հացնիմ. ամմա սօր Ղարաբաղին սումարանին օխնասուն հինգ տարուայ յօբելեանը իմ ազիզ ղարաբաղցուց (վո՛ւյ ես ընդըրանց ջանին մատաղ քինամ) սէրն ու միաբանութիւնը, քաղցր խօսքն ու հարիւր հազարներաւ էտ սումարանին օքնութիւնը ինձ թև ա տամ, հու ա գիտըմ բեալքի վերչի անքամ, զուռնաս փչիմ ու տմըլիս թխեմ ու մեր սիրած հոգեորական սումարանին օխնասուն հինգ տարին պիւլիւրվելուն մհար իմ աչքալուսանքը տամ. «Աչքըլէտ լիւս, ա՛յ իմ ազիզ ղարաբաղցիք։

Հու չի՞ գիտըմ, ա քմմատաղ, վէր ըշխարքաւս մին շաղ եկած, սօր մին կուտուր հացի տէր դեռած, անըմ հանած ղարաբաղցիք, մեր էտ շկօլին ըն պըտական։ Ղալին սումարանը շատ ցաւեր ա քաշալ, շատ քար ու կարկուտ թափւալ կլխին, շատ ղալմաղալնէ տեսալ, շատ շատերը սիւլիւկնու նման 'նեստա կալած՝ ընտրան ծծալ ըն արնաքամ ըրալ, շատերը իւրանց դեալլաքութիւնը ընտրա կլխին ըն փորձալ, ամմա նա 75 տարի համփերութիւնաւ դիմացալ ա, մէջքը ղայիմցրալ, սարու նման կաղնալ։

Նա էլ վախ չունի, քանի կողքը հաստ ղարաբաղցին իւրան կողքերը դէմ ա տւալ էտ սումարանին ու մհէգսա տէնը թողել չի, վէր ընդրան չար մաքաւ մուտանող ինի. բա մէռած պետմա ինին ընդրա ծոցան տիւս եկած լիւսըթաթախ խօխէքը, վէր թողին իւրանց բիրչակը սիպտակած մօրը քէֆին նի եկող ինի։

Ղարաբաղին սումարանը հազարաւեր մարթուց մօրա ու հէրա իւել ամագ ա տւալ, վեց-օխտը տարի իւրան թեւին տակին տիւղտիւղալաւ պահալ, մըծըցրալ, խելք, շնորք նշանց տւալ, մըթա մէջ քցալ, բա՞ հու ընդրա ամագը կմուռանայ, հո՞ւ կը կարի ընդրան խէթ աչքաւ եշի, էտ վէ՞ր խօխա իւրան ազիզ մօրը աչքաթող կանի։

Ղարաբաղին սումարանին տօնը, սաղ ղարաբաղցին վէր ընդրանց աշխատանքը ի զուր չի կորչի, պաչըմ ըմ էտ սումարանին հեարիւրաւեր աշակերտներին, վէր ընդրա ճրաքը վառ պահին, էլ իւելի տաք սրտաւ կըպչին, ընդրան թեւ թէկունք տեռնան, իւրանց մօր նման սիրին։

Պաչըմ ըմ ճկըտներան, Ղոնդկանայ ու Սարիբէգի օրհնութիւնը խնթրըմ ընդրանց ու ընդրանց վերթկերանց երայ, վէր էտ սումարանին յօբելեանը լսելաւ, հզեր ու մին տեղաց թուփ ըն տեռալ ղալան, եա չէ ընդրա տեսքին հասրաթ՝ ամէն մինը իւրան գեօրա իւրան քսակին ըռէխը պեց արալ իւրան օքնութիւնը հսցրալ։

Պաչըմ ըմ մեր էն վարթաբետներին ու աշխարհականներին ճկըտներան, վէր էտ յօբելեանը կլօխ պերելու մհար շհարբաշհար ընկած աշխատալ ըն, տանըտուը ընկած փող հւաքալ, հարիւր հազարներ հսցրալ եա խօսքաւ ու գեօրծքաւ օքնալ։

ՇՈՒՇՈՒ ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

(Այժմս Ղարաբաղի Թեմ. Դպրանոց)

ցիներին տօնն ա. մեծ, պուճուր, տղայ, աղջիկ, հարուստ, աղքատ, չոլըցի, շհարցի, լօխ էլ էտ ազիզ օրը շայտող պետմա անին, օրախ սրտաւ ընդրա տաներին մուտանան, ընդրա լիւսըթաթախ պատերը պաչին, իւրանց ձեռքաւը եկած օքնութիւնը հսցնին, ընդրան դայաղ կենան, վէր նա էլ իւելի ծլի, ծաղկի իւրան վարթ ու մանիշակի վետաւը լօխչու լիյըցնի։

Զուռնիս փչելաւ, ամբլիս թխելաւ շնհաւեր ըմ անըմ մեր սումարանին յոբելեանը, ընդրա մղակաւ ֆնողներին աչքալիւսանք ասըմ, ողորմի ասըմ ընդրա հիմքը քցողներին, օրհնում էն հեարիւրաւեր աշխատաւերներին յիշատակը, վէր պահալ, պահպանալ ըն էտ սումարանը, չրռ մեզ հսցրալ, պաչըմ ըմ մեր Ջաֆաքէշ վարժապետներին ճկըտներան, ըստուծանա խնթրըմ,

Տայ Աստուած, վէր մեր սումարանը մհէգսա տէնը էլ իւելի ծաղկի, էլ իւելի փառաւեր յօբելեաննէ կատարի ու ընդրանայ տիւս եկած մեր հայ խօխէքը էլ իւելի լիւսաւեր տիւս կեան ու իրանց լիւսան նհետ մեր թխպած Ղարաբաղին լիւս տան, հունց վէր չըռ մհէգ տւալ ըն ու տալիս ըն։

Ղարաբաղին Ջրին կարօտ, սարերին ու ծորերին կարօտ, սումարանին պատերին կարօտ, քամու ճղացին, ճաքած քերծին, պեխի աղբիւրին, պիւլիւր թումբին քեօհնա հեանգիստներին կարօտ, ատստաւկատւած՝

Տմբլաչի-Խաչան

ՅՈԲԵԼԵԱՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՇԿՕԼԻ ՇՈՒՐՋԸ

Ես թէև Հոգևորական շկօլում չեմ կարդացել, բայց աչքս բացած օրից մինչև Շուշուց հեռանալս սերտ կապւած եմ եղել նրա հետ։ Եթէ Բաղդասար Միտրոպօլիտը հիմնել է Հոգևոր Ճեմարանը (Արցախի Թեմ. դպրոցը), մօրեղբայրս էլ՝ Համբարձում-աղա Հախումեանը տւել է այդ հաստատութեան ոգի, կեանք և ուղղութիւն։ Եւ սխալ չէ ժողովրդի հոգեբանութիւնը, եթէ նա Համբարձում-աղա Հախումեանին էլ է համարում Ղարաբաղի Թեմ. դպրանոցի հիմնադիր։

Տ. Տ. Մատթէոս Ա. Կաթուղիկոս
Ղարաբաղի Թեմ. Դպ. ժողովրդին յանձնող
(Հոգաբարձ. և կանոնադր.)

Հոգևորական շկօլը հայ յիշում եմ առաջնորդարանի փողոցում կնեազ Կարապետի (Горе от ума հայերէն թարգմանող հանգուցեալ Կոստանդին Տէր-Աստւածատրեանի հօր) տան վերին յարկում։ Այդ տունը այժմս Խուբլարեան եղբայրներինն է։

Տունն ունէր մեծ դարպաս, ընդարձակ բակ, դարաւոր, սաւերախիտ ծառերով պճնւած և մի փոքրիկ դարպաս։ Ներքին յարկում Գալուստ վարդապետ Փափազեանի բնակարանն ու 12 ընտրեալներիս դպրոցն էր։ Հայր-սուրբը ֆրանսերէնի դասերն էր աւանդում Հոգևորական շկօլում, իսկ իր բնակարանում տասներկու աշակերտների ուսուցանում էր, գլխաւորապէս լեզուներ՝ հայերէն (գրաբար), ֆրանսերէն, լատիներէն։ Կնեազ Կարապետի տղայ Կոստ. Տէր-Աստւածատրեանը մեզ այստեղ ռուսերէն էր սովորեցնում։ Հայր-սուրբը իր միակ որդին (նա նախ քահանայ է եղել Կ.-Պօլսում) կորցնելուց յետոյ օր-օրի վրայ սրտամաշ էր լինում, համարեա միշտ հիւանդ, շատ քիչ էր բարձրանում վերև՝ Հոգևորական շկօլը դասը աւանդելու, այլ յաճախ մենք երեխաներս էինք նրան փոխարինում։ Դասամիջոցներին էլ թէև շփւում էինք դպրանոցի բակում Հոգևորական շկօլի աշակերտների հետ, սակայն խօսել նրանց հետ յաճախ չէր աջողում։ Հայր-սուրբը իր 12 աշակերտներիս համար իւրաքանչիւր լեզւին օր ունէր որոշած։ Վայ էր, եթէ օրինակ լատիներէն խօսելու օրը հայերէն խօսէինք, իսկոյն տախտակը կը կախէին խօսողի վզից և նա կը կրէր սահմանւած պատիժը։ Նախադասութեան մէջ չիմացած բառը կարելի էր փոխարինել իմացած հայերէն, ֆրանսերէն բառով, բայց ամբողջ նախադասութիւնը ասել մի լեզւով, չէր թոյլատրւում։

Համբարձում-աղա Հախումեան
Խարիսխ Ղարաբաղի Ազգ.-Հոգ. Դպր.

*
* *

Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալեանցը, Բաղդասար Միտրոպօլիտի տոհմից վերջին թեմական առաջնորդը, արդէն ընդարձակել էր առաջնորդարանը, դպրանոցի շէնքը բաժանել մի ցած պատնէշով ու տեղափոխել Հոգևորական շկօլը իր սեպհական շինութեան մէջ։ Այս ժամանակ Թեմ. դպրանոցում սովորում էին և շուշեցի մի քանի թիւրք երեխաներ, որոնց թւում էր և Մեհդի-Ղուլի-խանի թոռը, որ քեռուս, Համբարձում-աղա Հախումեանի քիրւէքն էին։ Խանօղլանը մի լեհ, Բլեզանսկի ազգանունով, դաստիարակ ունէր, սա աւանդում էր Հոգևորական շկօլում ռուսաց լեզու և միաժամանակ նոյնիսկ թեմական դպրանոցի տեսչի պաշտօնակատար էլ էր։

*
* *

Առաջնորդական փոխանորդ և դպրանոցի տեսուչ եկաւ Գ. վ. Սուրէնեանը (այժմ Ամենայն Հայոց Վեհափառ Գէորգ V Կաթուղիկոս), բայց երկար չը մնաց Շուշում։

Նշանակալից էր երիտասարդ վարդապետներից Արիստակէս Սեդրակեանի առաջնորդութիւնը, որին հովանի և հզօր նեցուկ

Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալեանց
Վերջին Թեմ. առաջնորդ Ղարաբաղի Հասան-Ջալալեան տոհմից

եղաւ Համբարձում աղա Հախումեանը։ Սա երազում էր Շանշեանի օրերը վերածնել, որ և մասամբ կատարեց, բայց աւաղ, ոչ երկարատև։

Սեդրակեանի առաջնորդութեան օրով թատերասէրներս Համբարձում-աղա Հախումեանի պալատ-տանից Թեմ. Դպրանոցը տեղափոխեցինք թատրոնական բեմը։ Երկու դահլիճների միջի պատը, Սեդրակեանի բարեհաճ թոյլտուութեամբ, քանդեցինք, բեմ կառուցինք։ Իսկ Շուշուց հեռանալիս թատրոնական բոլոր զգեստեղէնը, արքուսարքը նուիրեցինք դպրանոցին։

ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՐ ԴՊՐԱՆՈՑԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Տ. Տ. ԳԷՈՐԳ V.

Նախկին Վերատեսուչ Ղարաբաղի Թեմական Դպրանոցի

Վ. Պապաջանեանի և Ղ. Աղայեանի օրերով Թեմ. Դպրանոցին նուիրեցի մի քանի հարիւր հատոր հայերէն, Վենետիկի, Կ. Պօլսի հրատարակութիւններ, որոնց թւում 50—60 թւականներին Ռուսաստանում, Տաճկաստանում և Վենետիկում հրատարակուած հայերէն բոլոր ամսաթերթերի (ծիլն Աւարայրի, Արծիւ Վասպուրականի, Նիրոպա, Բազմավէպ, Հիւսիսափայլ և Կռունկ), ամբողջ տարիները։

Տեղափոխուելով Թիֆլիս, հեուից ուրախանում էի, լսելով Նրա կանաչ-կարմիր օրերը և տխրում սև ու կապոյտ խառնակ օրերին։

Մակար Կաթուղիկոսի օծման հանդէսին ս. Էջմիածնում Կարապետ եպ. Այվազեանը Տաճարի եռև պ. Համբարձում Առաքելեանին ու ինձ խոստացաւ, երդուեց Իջման ս. Տաճարով, որ եթէ ինքը Ղարաբաղի թեմի առաջնորդ նշանակուի, մեր ծննդավայրի Թեմ. Դպրանոցը կը պայծառացնէ, սակայն նա խոստմնազանց եղաւ և Դպրանոցի կալուածների եկամուտը յատկացրեց կոնսիստորին ու Էջմիածնին։

Վերջին տարիներս հ. Բենիկ վարդապետին էր ցանկանում Ղարաբաղն ունենալ իր թեմական առաջնորդ. Նրա պերճ քարոզները մեծ մխիթար էին եղել սգաւոր ղարաբաղցիներին։ Հայրենակիցներս յանձնարարեցին ինձ երկաթէ Պատրիարք Վեհափառ Իզմիրլեանին պեկուցանել իրանց աղերսը։ Ժողովրդասէր Իզմիրլեան Կաթուղիկոսը չը յաջողեց ժողովրդի տենչանքը և այդ օրւանից ես չը ներկայացայ Վեհափառին նոյնիսկ երբ վերջին անգամ Թիֆլիս էր եկել և քանիցս հարցրել ինձ։ Երկաթէ Պատրիարքը այդ աստիճան յամառութիւն անշուշտ չէր սպասում ինձանից, մանաւանդ որ նա ոտքը մեր երկրում դրած օրը, առաջին հրապարակական խօսքը, որ ասաց իր դիմաւորողներին, այդ իմ հասցէին էր՝ «Մենք հին բարեկամներ ենք...»։

Եւ այսօր, երբ հ. Զաւէն վարդապետին է վիճակուած իր սգաւոր ծննդավայրի բարոյական վերածնութեան ճշմարիտ փակտոր Ղարաբաղի Թեմ. Դպր. LXXV-ամեայ Յոբելեանի նախաձեռնութիւնը, ես խնդակից իմ հայրենակիցներին, հրճւանօք յանձն առայ Կենտրոնական Յոբելինական Յանձնաժողովի պատուաբեր որոշումը և Իբրև պատգամաւոր ընտրուած թեմի առաջնորդ հ. Զաւէն վարդապետի ու հայրենակից պ. Մովսէս-բէկ Իւզբաշեանի հետ կատարեցի իմ վրայ դրած առաքելութիւնը՝ Ամենայն Հայոց Վեհափառ Տ. Տ. Գէորգ V Կաթուղիկոսին ներկայանալով և ղարաբաղցիների որդիական ակնածութեամբ ողջոյնը մատուցանելով, հայցեցինք Նորին Վեհափառութեան Բարձր Հովանին Ղարաբաղի Թեմ. Դպրանոցի Յոբելեանին, հրաւիրեցինք Իր շնորհաբեր ներկայութիւնը Յոբելենական հանդէսներին և խնդրեցինք տալ Իր յատուկ ներկայացուցիչը թեմի առաջնորդ հ. Զաւէն վարդապետի հետ նախագծուածը կատար ածելու։

Վեհափառ Կաթուղիկոսը լիուլի կատարելով ղարաբաղցիների տենչանքը, տուաւ Իր ներկայացուցիչ սինօդի եռանդուն անդամ ղարաբաղցի հ. Բարգէն վարդապետին, որը և թեմի առաջնորդ հ. Զաւէն վարդապետի հետ, տոգորուած հայրենասիրութեամբ, կարող եղան նշանակալից անել Ղարաբաղի Թեմ. Դպրանոցի Յոբելեանը։

Յարգանք ղարաբաղցիներին։

Տ.

ՂԱՐԱԲԱՂԻ ՅՈԲԵԼԵԱՐ ԹԵՄ. ԴՊՐԱՆՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

† ՍԱՄՈՒԷԼ ԳԻՒԼԶԱՏԵԱՆ

† ԱՐՍԷՆ ԹՈԽՄԱԽԵԱՆ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂԵԱՆ

ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ

† ԳՐԻԳՈՐ ՊԱՊԵԱՆ

ԵՐՒԱՆԴ ԼԱԼԱՅԵԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺԱԿ

† ՆԵՐՍԷՍ ՇԱՀԼԱՄԵԱՆ



ՅԱԿՈԲ ԽՈՋԱՄԻՐԵԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԳ. ՀՈԳ. ՅՈԲԵԼԵԱՐ ԴՊՐԱՆՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
(Վահան վարդապետ)
Անդրանիկ ընթացաւարտ (1861) աշակերտ։ Անդրանիկ Թեմական վերատեսուչ Ղարաբաղի Թեմի բոլոր ուսումնարանների։ Այժմ վանահայր Ս. Խաչ վանքի։



† ԱՌԱՔԵԼ ԲԱՀԱԹՐԵԱՆ
հռչակաւոր մանկավարժ (1867)

ՓԱՐՍԱԴԱՆ ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ
Մագիստրոս Մեսրոպ եպիսկոպոս,
Թիֆ. Թեմ. առաջնորդ (1882)

ՆԻԿՈՂԱՅՈՍ Վ. ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆ

ՏՄԲԼԱՁԻ ԽԱՉԱՆ
Կոստանդին Մելիք-Շահնազարեան



† ՍԻՄԷՕՆ ՀԱԽՈՒՄԵԱՆ
(1873)

Մ Ո Ւ Ր Ա Ց Ա Ն
† Գրիգոր Տէր-Յովհաննիսեան (1873)

ԳԱԲՐԻԷԼ ՎԱՐԺԱՊԵՏ
Ղուլիքեխայեան

Լ Է Օ
Առաքել Բաբախանեան (1874)

ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԳ.-ՀՈԳ. ԴՊՐԱՆՈՑԻ 75-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Ղարաբաղի Ազգային-Հոգևոր Թեմ. Դպրանոցի 75-ամեայ յոբելեանի առիթով հ. Բարգէն և Զաւէն վարդապետների հանգանակած գումարը վեցհարիւր հազար ր.-ուց աւելի է։ Այս գումարի մէջն են՝ 1) Մոսկովաբնակ ղարաբաղցի պ. Բաղդասար Արզումանեանի ընծայաբերած 200,000 ր. 2) Տ. Հռիփսիմէ Խանդամիրեան-Ղուկասեանի (զաւակներով), յիշատակ իր վաղաթառամ դուստր օր. Մարիամի, Շուշում իրանց եօյարկանի հոյակապ, քարաշէն մեծ տունը ընդարձակ պարտիզով 50,000 ր. արժողութեամբ և 230,000 ր. դրամով յօգուտ Շուշու Մարիամեան օր. դպրոցի, որ պիտի վերածւի իգական գիմնազիայի հաւասար իրաւունք և ծրագիր ունեցող միջնակարգ ուսումնարանի։ 3) Գ. Միքայէլ Արամեանցի (Յոբելեար Դպրանոցի սան) իր վաղաթառամ որդի Յովհաննէսի յիշատակին Շուշում ընծայաբերած իր մի քարաշէն տունը ընդարձակ պարտիզով 45,000 ր. արժողութեամբ։ Գ. Մ. Արամեանցի այս նուիրաբերած տունը իր alma mater-ին կրկնակի արժէք ունի, որովհետև նա կից է Խանդամիրեան դրամագլխով կառուցւած (Արիստակէս վ. Սեդրակեանի օրով) օրիորդաց դպրոցին, ուր այժմս տղայոց դպրոցն է։ Այս երկու շինութիւնները միացնելով, շատ կընդարձակւի ապագայ կառուցանելիք դպրոցը։ Մնացեալը մանր նուիրաբերութիւններ են, որոնց գումարը անշուշտ կը հասնի մի միլիօն րուբլու։

*
* *

Մովսէս Թաւադեանի բարեգործութիւնների համար իր մօրեղբօրորդի պ. Բօղդան Գասպարեանի բարեհաճ տրամադրութեան թողած մեծաքանակ գումարից, ինչպէս լսում ենք, առայժմս պ. Բ. Գասպարեանը Դպրանոցի յոբելեանի առիթով ընծայաբերելու է 25,000 ր.։ Մեր խորհուրդն է, որ Մ. Թաւադեանի կտակատարը չը մանրացնէ իր ծննդավայրին, թէև բերանացի, Մ. Թ. կտակը, այլ ամբողջովին նուիրաբերէ Շուշուն, գնելով հէնց այդ նուիրելիք 25,000 ր. նախ Թեմական Դպրանոցին պատկանող «Ամբարը» և ապա այս նշանաւոր տեղը, որի մի կողմին պ. Գր. Առաֆելեանի կառուցած հոյակապ ռէալական ուսումնարանն է, դիմացը Ղուկասեանների արդէն նուիրաբերած տունն ու պարտէզը Մարիամեան օր. ուսումնարանին և նրանից մի քանի քայլ հեռու Ժամհարեան եղբայրների քաղաքին նուիրած իրանց կառուցած և ապահոված քաղաքային հիւանդանոցը, միւս կողմից գտնւում է քաղաք. ակումբի ամառային շինութիւնը և Պետրոսեան պարկը, —ահա այս ամբարի տեղը կառուցանէ Մովսէս Թաւադեանի անունով Ժողովրդական Տուն, որը պարունակէ թատրոնական սրահ, վայելուչ ընդարձակ բեմով, հիւրանոց—սանատօրիա, ամարանոց եկւորների համար 2—3 սենեակներից բնակարաններով, ներքևի յարկում կրպակներ, ընթերցարան, ձմեռային ճեմլիք և այլն։ Եւ բոլոր եկամուտով դարձեալ Մ. Թաւադեանի անունով պահեն որդեգիրներ Թեմական և Մարիամեան օր. ուսումնարանում։

ԲԱՂԴԱՍԱՐ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

Խաչեղբայր Յոբելեար Դպրանոցի.

Այսպիսի մի հաստատութիւն մեր առաջարկով մտադրել էր կառուցանել Իսահակ Ժամհարեանը, սակայն անողոք ճակատագիրը այլ կերպ էր վճռել․․ Նա նահատակւեց մեր յեղափոխականների ձեռքով։ Այդ մտադրութիւնը իրականացնելու համար, մենք հանգուցեալ Իսահակ Ժամհարեանի աչքերում նկատեցինք նոյնիսկ ուրախութեան արտասուք։ Այս րոպէները իրանց պատմութիւնն ունին, որ ժամանակին կանենք։

*
* *

Թեմական. Դպրանոցի յոբելեանին Շուշի են գնում մեր ազգային-հասարակ.—կրթական, հաստատութիւնների և մամուլի կողմից պատգամաւորներ թէ Կովկասից, Անդրկովկասից, Ռուսաստանից և թէ արտասահմանից։ Թիֆլիսաբնակ ղարաբաղցիները Գրական-Գեղագիտական Սալօնում խորհրդակցութիւն կազմելուց յետոյ յուլիսի 19-ին, որոշեցին 12 հոգուց մի պատգամաւորութեան միջոցով իրանց շնորհաւորութիւններն ու խնդակցութիւնն արտայայտել Յոբելեար Դպրանոցին և ուղարկել նրա 75-ամեայ պսակին «խունկ», այն է Դպրանոցի դահլիճի համար 1) նկարիչ պ. Գ. Բաշինջաղեանի նշանաւոր «Ներսէսի լիճը» Խրիմեան Հայրիկի օրով, 2) ղարաբաղցի տաղանդաւոր անդրիագործ պ. Մ. Միքայէլեանի նշանաւոր գործերից՝ Թիֆլիսի կինտո (Պէպօ) 3) Հ. Ղ. Ալիշանի Այրարատը փառակազմ դպր. գրադարանի համար։ 4) Գեղանկար ուղերձ, շրջանակի մէջ, 5) Դպրանոցի յոբելեանը նախաձեռնող ու նրան հանգանակութեան գործում աջակից Զաւէն և Բարգէն վարդապետներին խալաթ (նւէր) իրանց մեծադիր պատկերները պատշաճ շրջանակների մէջ։

Ղարաբաղի Թեմական Յոբելեար Դպրանոցի սան

ԲԱԲԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Ներկայացուցիչ Վեհափառ Տ. Տ. Կաթուղիկոսի,

Անդամ Ս. Էջմիածնի Սինոդի։

Ղարաբաղի Թեմական Յոբելեար Դպրանոցի սան

ԶԱՒԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Նախագահ Յոբել. Յանձնաժողովի,

Առաջնորդ Ղարաբաղի Թեմի.

Հոգաբարձութիւն Ղարաբաղի Հ. Թեմ. Դպր. եւ Յոբելենական Կենտ. Յանձնաժողով.

1) Ղարաբաղի Թեմի կառավարիչ տ. Զաւէն վարդապետ, 2) Քաղաքագլուխ Գրիգոր Բալանթարեանց (հոգաբարձու), 3) Անդրէաս Տէր-Յարութիւնեանց (հոգ.), 4) Խորէն քահ. Իսկանդարեանց, 5) Եղիշէ քահ. Թարխանեանց, 6) Մուշեղ ա. քահ. Վարդապետեանց, 7) Ջումշուտ Մելիք-Շահնազարեանց (հոգ.), 8) Իսաջան Տէր-Յովհաննիսեանց (հոգ.), 9) Առաքել Աւագեանց, 10) Յակովբ Պետրոսեանց, 11) Եփրեմ Այգինեանց, 12) Ամիրբար Բարայեանց, 13) Գէորգ Տէր-Ստեփանեան. 14) Իսաջան Տէր-Մինասեանց. 15) Լևոն Շաքարեանց, 16) Գաբրիէլ Ղուլիքեխայեանց, 17) Եգոր Յարութիւնեանց, 18) Մովսէս Իւզբաշեանց, 19) Արշակ Մանկասարեանց, 20) Նիկողայոս Զուրաբեանց, 21) Մելքում Խալափեանց, 22) Քրիստափոր Փիրջանեանց, 23) Յովակիմ Ստեփանեանց, 24) Տիգրան-բէկ. Իւզբաշեանց, 25) Գրիգոր Ղարագեօզեանց, 26) Դաւիթ Աւագեանց, 27) Թէոդորոս Տէր-Յովհաննիսեանց։

Շուշի. «Երեւանեան դարբասի» քարծոնք.

ՔԵՐԾԸ

Քերծն ոտքիս տակն է հաստատպինդ ամուր,
Նրա գագաթին արձան եմ կտրած.
Դիտում եմ հեռու ձորերն ու լազուր,
Գիւղեր, ջրաղաց՝ կանաչում թաղւած։
Շուրջս մողէսներ, բզէզ ու մրջիւն
Վխտում են. էշն է աստ ծոյլ—ծոյլ շարժւում,
Անդ Քերծի ծայրին քարայծը արթուն
Ոստոստում ուրախ, միրուքով անում։
Ջգաստ շները ոռնում են գիւղից,
Աղաւնիները կողքիս կարանից
Տխուր վըսվըսում.
Դաշտում, անտառում
Մարդիկ են շարժւում.
Գետը կարկաչում,
Աչքս ծակոտում։
Եւ թառ, զուռնա, դափ թախծամած հոգիս
Վեր-վեր են հանում. օրհներգ, մեղեդի,
Ողբ, սէր ու կսկիծ՝ ծանօթ, ընտանի
Ինձ հմայում են, խօսում են սրտիս։
Եւ Քերծի գլխին ծնկաչոք ընկած
Լուռ աղօթում եմ Երկինք վերացած,
Որ նա պինդ պահէ Քերծն ոտքիս տակին,
Որ Նա միշտ խարիսխ դառնայ մեզ համար,
Որ իմ չորս բոլոր հրճւի անմեկին՝
Պսակ բոլորած իմ սիրուն Քերծին.
Որ ամպրոպ, կայծակ՝ կեանքի ծարաւի
Չը վշտացընեն նրան իր օրում,
Բուքը հիւսիսի, խորշակն հարաւի
Երբէք չը հասնեն Քերծին վիթխարի.
Եւ Ղարաբաղի մուժ օրօրոցում
Թող նա կարծրանայ, կուփ. ամրանայ...
Թող դարեր անցնեն և մեր սրտերում
Մեր սիրուն Քերծը թող անմահ մնայ։
Իսկ թէ մեր կեանքը, սիրտը և հոգին
Վաղը սինլքոր դառնայ, փոքրանայ,
Սուրբ կարեկցութեան ազնիւ կաթոգին
Սէրը մեր հոգուց թէ կը չքանայ,
Եւ սև խաւարին անձնատուր եղած՝
Մեր մտքում ծնւին դաւեր մոռացւած,
Եւ աւերակը հայրենի երկրի
Նոր վարդենիքով պիտի չը ծաղկի,
Եւ շիրիմներում յիշատակ նախնեաց
Մեր ազնիւ գործով պիտի չը բերկրի,
Եղբայր եղբօրը ձեռք չը կարկառի,
Կեանքի կուի մէջ միացած կուի
Թող Քերծն էլ ընկնի, խորտակւի, հալի,
Եւ իր տակ ծածկի գիւղ, ձոր, գետ, մարդիկ.
Խայտառակ արձան
Եւ միշտ անկործան
Լինել՝ չէ երբէք մի բախտ ցանկալի.
Քանց խղճուկ կեանքը՝ մահն է սիրելի։

Կայծ

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԿՐՈՒՄ

Տխուր ու յոգնած, ղէմքով արեւառ,
Ճանապարհների փոշին ուսերիս,
Քո գիրկը ընկայ, մայրենի ան-
տառ,
Համբոյր բուրեցիր խունջացած
սրտիս...

Ոսկի օրերի, անուշ յուշերի
Գետակն է խօսում այս մթին ձորում.
Երազ յուշերի, արեւ օրերի
Աղբիւրն է ինձ մօտ շքեղ կայլակում...
Մայրենի անտառ, աղբիւր ու գետակ,
Իմ լոյս մանկութեան ջերմ հարազատներ,
Հայրենի վայրեր, դաշտեր ու ձորակ
Դուք նոյնն էք դարձել... լոկ ես եմ փոխւել...
Ականջ եմ դնում ձեր սիրոյ ձայնին,
Իմ սիրտն է անտես ձեր սիրով վառւում.
Սրբազան յուշեր, մխ, վայրեր անգին
Իմ հոգին կարծես նոր կեանք է առնում...
Տխուր ու յոգնած, դէմքով արեւառ,
Ճանապարհների փոշին ուսերիս,
Քո գիրկը ընկայ, մայրենի անտառ,
Համբոյր բուրեցիր խունջացած սրտիս...

Ց. Խանլարեանց

Շուշի

ԱՅՍՊԷՍ Է ԱՍՈՒՄ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ...

(Նուիրում է Ղարաբաղի Թեմական Դպրանոցին՝ 75-ամեայ յոբելեանի առիթով)

Ժայռի գագաթին նստել էր Անգղը և արեան ծարաւի աչքերով սպասում էր զոհին: Անդունդի մութ անկիւններում թառել էին բուերը, և մութի մէջ նրանց աչքերը փայլում էին ինչ որ դժգոյն և ահարկու փայլով...

Քիչ էր պատահում, որ մարդ ոտք դնի ժայռի գագաթին:

Ժեռ-քարի այդ թագաւորութիւնը մի անպտուղ անապատի էր նման:

† ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆ
Թէ կենդանութեան ժամանակ, թէ այսօր երկնքից հովանի դպրոցի և գրականութեան:

Խոտ ու ծաղիկ չէր բսնում այնտեղ: Առւակը չէր խոխոջում. նրա անրջային խոխոջը անծանօթ էր Անգղին ու բուերին:

Վայրի գիշատիչները իրանց համար պաշար էին ճարում ժայռի ստորոտում, ուր փռւած էր մի արգաւանդ երկիր իր սիզաւէտ, մարմանդ դաշտերով և կանաչագեղ բլուրներով:

Ժայռը ոչինչ չը գիտէր այդ երկրի մասին: Միայն կատաղի քամին էր, աղմկալի պարի ժամանակ, պատմում և զումրուխտեայ դաշտերի ու բլուրների գովքը անում:

Սակայն բուերը քամու պատմածները հէքիաթ էին համարում: Նրանք հաւատում էին միայն իրանց բներին: Նրանք օր ու գիշեր նայում էին դէպի անդընդախոր ձորերը և՝ բացի ամպշող-ստւերներից՝ ոչինչ չէին նկատում:

Դաշտի սէգ Ուրուրները՝ ամպերը ծակելով, սև կայծակի նման, ազատ ու համարձակ սլանում էին դէպի գագաթը՝ ժայռին դիտելու...

Մի անգամ էլ Աղաւնին թռաւ դէպի ժայռի բարձունքը և կտուցից մի հատիկ ձգեց այնտեղ ու մնաւ՝ իր արեան կաթիլներով ցողելով հատիկը...

Հատիկն ընկաւ ժայռի վրայ և ծածկւեց աւազի մէջ: Իսկ Աղաւնուց մնացին միայն փետուրները՝ ցրւած ժայռի վրայ:

Լուսադէմին հողմը եկաւ, հաւաքեց նրանց ու ամփոփեց գագաթից հեռու մի տեղ...

Տ. ՆԱԶԱՐԵԱՆ, ԶԱՒԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ, Մ. ԻՒԶԲԱՇԵԱՆ:
Ամենայն Հայոց Վեհափառ Տ. Տ. ԳԷՈՐԳ V Կաթուղիկոսին ս. Էջմիածնում ներկայացած Ղարաբաղի Թեմ. Դպր. Յոբել. Կենդր. Յանձնաժողովի պատգամաւորութիւնը:

Անցան տարիներ: Ձմեռ ու ամառ, ամառ ու ձմեռ յաջորդում էին միմիանց:

Երկար ժամանակ լեռները ծածկւած էին ձիւնով: Բայցահա եկաւ գարունը, և արևի ճառագայթները իրանց ջերմագին համբոյրներով հեղեղ դարձրին նրան:

Արեգակը կամ ծագում էր լեռան վրայ, կամ իջնում էր դէպի անդունդները: Հողմն էլ առաջւայ նման միևնոյն երգն էր երգում...

Մի անգամ վաղ առաւօտեան, երբ արևը դեռ չէր ծագել լեռան վրայ, այլ պտոյտ էր գալիս ինչ որ մի տեղ, լեռների այն կողմը, ժայռերի մէջ մի մարդ երևաց: Նա դժւարութեամբ էր շարժւում՝ մագլցելով քարերի վրայով և փշոտ արահետներով:

Սուր քարերը պատառում էին Նրա հագուստը և վիրաւորում էին ձեռքերը. բայց նա յամառութեամբ բարձրանում էր դէպի վեր, դէպի առաջ...

Նա ձգտում էր դէպի այն գոլարագեղ ու լուսաշող վարդը, որը բացւել էր ժայռի գագաթին, հէնց այնտեղ, որտեղ Աղաւնու կտուցից ընկել էր հատիկը... Չքացան Անգղն ու բուերը, և հիմա մարդիկ անարգել դիմում են դէպի շողազարդ ու լուսատու, բուրաւէտ ու գեղանի վարդենին, որը կայ և յաւիտեան պիտի մնայ, քանի որ նա ոռոգւած է անմեղ արեան կաթիլներով, մեր տանջւած սրտերի արեան վառ շիթերով...

Մուսաեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

ՅՈՒՇԵՐ

(Նւէր Ղարաբ. Թեմ. Դպր. II դասարանին)

ԽՕՍՔԵՐ Ս. Զքչեանի.

ԵՐԱԺՇՏ. Գր. Միրզոյեանի (Սիւնի)



† Նկարիչ Ստեփաննոս Ներսիսեան

Ղարաբաղի Թեմ. Դպր. գեղագր. և նկարչ. ուսուցիչ

ՅՈՒՇԵՐ

Յիշում եմ ես իմ մանկու-
Թիւն,
Պայծառ ինչպէս արշալոյս,
Մայրական ձայն քաղցրահըն-
չիւն,
Կարկաչի պէս քաղցրանոյշ։

Սիրում եմ ես քեզ, հայրենիք,
Հոգիս մատաղ քո սիրուն,
Քո սէգ լեռներ, Ջըրեր քաղ-
ցրիկ,
Քո հեկեկանք, քո արիւն...

Սիրում եմ ես քեզ, մանկու-
Թիւն,
Պայծառ ինչպէս արշալոյս,
Մայրական ձայն քաղցրահըն-
չիւն,
Կարկաչի պէս քաղցրանոյշ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

26 յունիս 913 Նուխի

Կարդալով Ձեր կոչը ապրեցի անցեալ յուշերը, յիշեցի իմ Թեմ. Դպրանոցում եղած օրերս, յիշեցի ընկերներիս, այն դասարանը, որտեղ ես բաժանւեցի ընկերներիցս և գնացի Էջմիածին ապա ՍՊԲ. կոնսերւատորիան։ Ահա և անմիջապէս գրեցի այս փոքրիկ խմբերգ յուշերը հայրենի զաւակների համար, որ և ուղարկում եմ Ձեզ։—Ձեռս առի իմ մանկութեան̃ օրերի ձայնագրութեան տետրակս, ուր Տէր-Գարեգինը ձայնագրել էր տւել լա, լա, լա, լա անելով Թեթև երաժշտական մի փոքրիկ Փրազ և նրանից մի Փուգա գրեցի, նրա երգած Թէման բոլոր ժամանակ անցնում է կարմիր Թելի պէս։

Գ. Միրզոյեան-Սիւնի.

ՑՈՒՑԱԿ ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ԴՊՐԱՆՈՑԻ ԵՒ ԱՇԱԿԵՐՏ-ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ 19¹²|₁₃ ՈՒՍ. ՏԱՐԻԱՑ.

I

Շուշում

1. ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑ

	Աշակերտ
Գ. հին. պատրաստ.	30
Գ. զուգ. »	32
Ա. հիմն. դասարան	35
Ա. զուգ. »	32
Բ. դասարան	42
Գ. դասարան	24
Դ. »	27
Ե. »	16
Զ. »	11
	249

2. ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ

	Աշակերտ
Ա. պատրաստ.	45
Բ. հիմն. »	43
Բ. զուգ. »	42
Գ. պատրաստ.	46
Ա. դասարան	41
Բ. »	18
Գ. »	15
Դ. »	14
	264

3. Մեղրեցոց եկ. ծխ. դպրոց 130 աշակերտ-

	Աշակերտ	ուհի
4. Ագուլեաց եկ. ծխ. դպ.	41	37
5. Վերին Թաղի » » »	71	56
		355

II

Խաչէնի գաւառում

	Աշակերտ	ուհի
6. Խանքենդու եկ. ծխ. դպ.	29	12
7. Բալլուջի » » »	69	79
8. Դահրաւի » » »	24	5
9. Սէյդի-շէնի » » »	49	3
10. Ջափար-Ուսադըզի »	29	—
11. Նորագիւղի » » »	22	4

III

Վարանդի գաւառ

	Աշակերտ	ուհի
12. Քեաթուկի » » »	34	25
13. Փիրջամալի » » »	48	11
14. Վարազաբոյնի » »	45	16
15. Դահրազի » » »	43	15
16. Մխրիշէնի » » »	32	6
17. Հացու » » »	39	12
18. Նորշէնի » » »	51	21
19. Աշանի » » »	54	32
20. Կաղարծնու » » »	37	14
21. Ննգու » » »	17	6
22. Ղաւախանի » » »	57	5
23. Հողորդու » » »	46	2
24. Մշկապատի » » »	44	21
25. Գիշու » » »	45	12
26. Խնուշինակի » » »	30	10
27. Գիւնէ ճարտարի » »	54	5
28. Սօսու » » »	17	4
29. Ծովատեղի » » »	40	11
30. Սխտորաշէնի » » »	30	6
31. Սարգսաշէնի » » »	21	10
32. Սարուշէնի » » »	33	18
33. Ներքին Թաղավարդի »	39	—
34. Դոնավարզի » » »	39	11
35. Քառասնաւ » » »	19	9
36. Հարաւի » » »	22	14

IV

Դիզակի գաւառ

	Աշակերտ	ուհի
37. Թաղլարի » » »	132	13
38. Ազոխի » » »	30	2
39. Մոխրենէսի » » »	15	6
40. Հադրութի » » »	63	109
41. Թղասեռի » » »	30	4
42. Բանազուրի » » »	50	10
43. Ցորու » » »	45	—
44. Կարմրակուճի » »	17	17
45. Դոլանլարի » » »	34	8
46. Շաղախի » » »	26	5
47. Ղարաբուլախի » »	47	8
48. Մազրզուի » » »	11	—

V

Նուխայ գաւառ

	Աշակերտ	ուհի
49. Նուխի քաղաքի » »	123	209
50. Կախ աւանի » »	33	33
51. Նիժ աւանի » »	220	22
52. Վարդաշէնի » »	61	39
53. Քեանդակի » »	18	—
54. Ամուանի » »	30	5

—

Այս պաշտօնական ցուցակի համաձայն, որ ստացանք Ղարաբաղի Թեմական առաջնորդից յուլիսի 15-ին № 1059, ուղարկեցինք, Ղարաբաղի Թեմ. Դպրանոցի 75-ամեայ յոբելեանի առիթով, Յոբելեանական Կենտր. Յանձնաժողովին 1436 գիրք Աղբիւրից և Տարազից նւէր թէ Յոբելեար Դպրանոցի և Շուշի քաղաքի Օրիորդ. Մարիամեան ու եկեղ. ծխ. ուսումնարանների բոլոր աշակերտներին ու աշակերտուհիներին և թէ Թեմի բոլոր ուսումնարանների համար։

I Յոբելեար Թեմ. Դպր. աշակերտների համար՝

Պատրաստականների՝ Կամքի ոյժը (Նապոլէօն Ա.) I դաս.—Իմ Տօնածառը։ II դաս.—Թերակոյս (Գիւղական ուսումն. ճաշոն.). III դաս.—Սաֆօ։ IV դաս.—Ձիւն (Պշիբըշեւսկու)։ V և VI դաս.—Արդար (249 գիրք)։

II Մարիամ. Օրիորդ. աշակերտուհիների համար՝

Ա. պատրաստ.—Կամքի ոյժը (Նապոլէօն Ա.)։ Բ. պատրաստ.—Գաճաճ։ Գ. պատր.—Գարեջուրի (պիէսներ Ալ Արէլեանի)։ I դասար.—Ինչպէս զարդարել Տօնածառը։ II դաս.—Սաֆօ։ III դաս. Ձիւն (Պշիբըշեւսկու)։ IV դաս.—Արդար (264 գիրք)։

III Շուշւայ քաղաքի Ագուլեաց, Մեղրեցոց, Վերի Թաղի եկ. ծխ. ուսումնարանների բոլոր աշակերտներին (335 գիրք)։

IV) Թեմի բոլոր գիւղական եւ Նուխայ 49 ուսումնարաններին։ (12 ական օրինակ 588 գիրք).

—

Բացի այդ գրքերը, նւէր ուղարկեց տ. Զարուհի Նազարեանից Յոբել. Կենտր. Յանձնաժողովին 75-ական օրինակ ս. Սահակի և ս. Մեսրոպի մեծադիր պատկերներից (150 հատ) Թեմ. Յոբելեար Դպրանոցի 17 բոլոր դասարանների (զուգընթացներով), քաղաքի եկ. ծխ. և Թեմի գիւղական բոլոր ուսումնարանների համար։

Թէ Շուշու և թէ Թեմի գիւղերի եկ. ծխ. ուսումնարաններին ուղարկել են բացի այն գրքերից, որ տրւել են Թեմ. Յոբելեար Դպրանոցի պատրաստական և I ու II դասարանների աշակերտներին, եւ՝ Նարդոսի՝ Նեղ օրերից մէկը, Լ'ն Տոլստոյի կենսագրական ակնարկ, Լուկաշեւիչի՝ Միդանչել եմ, Դ. Ամիչիսի՝ Հիւանդապահ որդին, ընդամենը 1436 գիրք և 150 պատկեր։

1838—LXXV—1913

ԿԱՐԳ

ՂԱՐԱԲԱՂԻ Հ. ԹԵՄԱԿԱՆ ԱԶԳ. ՀՈԳ. ԴՊՐԱՆՈՑԻ 75-ԱՄԵԱՅ ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

Ա.

Շաբաթ Օգոստոսի 3.

Կենտրոնական Յոբելենական Յանձնաժողովի, Մասնաժողովների, Հասարակութեան և հիմնարկութիւնների ներկայացուցիչների ուղեւորութիւնը Շուշուց Գանձասարի վանքը.

Կիրակի Օգոստոսի 4.

1. Հանդիսաւոր պատարագ և հոգեհանգիստ Գանձասարի Կաթողիկոսական մայր Տաճարում Դպրանոցի հիմնադիր երջանկայիշատակ Արհի Բաղդասար Միտրոպոլիտի շիրիմի վրայ։

2. Կենտրոնական Յոբելենական Յանձնաժողովից, համայն Ղարաբաղի հայ ժողովրդից, դպրանոցի աշակերտութիւնից դրւում են պսակներ։

Բ.

Չորեքշ. Հինգշ. Ուրբաթ. Օգոստոս 7, 8, 9,

Գրական—երաժշտական ցերեկոյթ- երեկոյթներ, դասախօսութիւններ, ներկայացումներ, բարբառների երեկոյթ և այլն։

Գ.

Շաբաթ՝ Օգոստոսի 10.

1. Հանդիսաւոր պատարագ Ագուլեաց մայր եկեղեցում։

2. Հոգեհանգիստ նախկին բարերարների, հոգաբարձուների, տեսուչների, ուսուցիչների և սաների յիշատակին. որից յետոյ եկեղեցական հանդէսը ուղեւորւում է Հին հանգստարանը, ուր հոգեհանգիստ է կատարւում Արհի Բաղդասար Միտրոպոլիտի հօր՝ նահատակ Դանիէլ-բէկ Հասան-Ջալալեանի գերեզմանի վրայ։

3. Այստեղից եկեղեցական հանդէսը թափօրով գնում է երջանկայիշատակ Բաղդասար Միտրոպոլիտի բնակարանը, (Թեմական Դպրանոցի հին շէնքը) ուր պատգամաւորների, հասարակութեան, ուսուցչութեան և աշակերտութեան ներկայութեամբ կատարւում է հոգեհանգիստ Արհի յիշատակին։

4. Պատշաճ բանախօսութիւն։

5. Երեկոյեան Թեմական Դպրանոցի դահլիճում համերգ։

1838 ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՄ. ԴՊՐԱՆՈՑԻ 1913

Կիրակի, Օգոստոսի 11.

1. Հանդիսաւոր պատարագ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում։

2. Ս. Պատարագից յետոյ Կայսերական և Հայրապետական գոհացողական մաղթանք։

3. Հանդիսաւոր երթթափորով յոբելեանական հանդիսի նշանակուած տեղը։

4. Հանդէսը բացւում է աղօթքով «Էջ Միածին ի Հօրէ» շարականով։

5. Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակի ընթերցումը։

6. Երգ և նուագ.

7. Երախտագիտական խօսք՝ ուղղուած Օգոստոսափառ Կայսեր, Կայսերական տան, Վեհափառ Հայրապետին և Կովկասի Տէր Փոխարքային։

8. Նուագախումբը նուագում է „Боже Царя„ օրհներգը։

9. Խումբը երգում է «Տէր կեցո» ազգային օրհներգը։

10. Ընթերցումն Դպրանոցի անսակական մասին համառօտ տեղեկագրի։

11. Խմբական երգ։

12. Ընթերցումն Դպ. ուսման մասին։

13. Խմբական երգ։

14. Բանախօսութիւն։

14. Խմբական երգ։

16. Ռոտնաւոր։

1. Պատգամաւորների, ներկայացուցիչների շնորհաւորական խօսք։

2. Ընթերցումն հեռագիրների, ուղերձների և այլն։

3. Շնորհակալական խօսք՝ ուղղուած հանդէսը պատւողներին Յոբելեանական կենդրոնական Յանձնաժողովի կողմից։

4. Փակումն հանդիսի պատշաճ փառաբանական օրհներգով։

Պաշտօնական ճաշ։

Երեկոյեան ժողովրդական համերգ՝ հայ ժողովրդական երգերով, աշուղական նուագածութիւն։ Ղարաբաղի բարբառով վօդևիլ։ Ժողովրդական պարեր և այլն։

Երկուշաբթի, Օգոստոսի 12.

Աշակերտական թափոր տեղական բոլոր ուսումնարաններից՝ երգով և նուագախմբերով։ Բանախօսութիւն հանդէսի նշանակութ. մասին։ Ոտանաւորներ՝ հայերէն, ռուսերէն, թուրքերէն լեզուներով։ Նուագածութիւն։

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՂԱՐԱԲԱՂ եւ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ

ՄՆԱՅՈՒՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ

որ լոյս է տեսնելու **ՂԱՐԱԲԱՂԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ** հետ շաղկապւելու **ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ** առիթով

պերճաշուք հոյակապ հրատարակութիւն։

Այս շքեղ հանդէսի մէջ պիտի լինեն XIX դարի եւ մինչեւ օրս ղարաբաղցի այն արհեստաւորների, արւեստագէտների, զինւորականների, գրականագէտների, գեղագէտների մանկավարժների, իրաւաբանների, բժիշկների, ինժեներների, բարեգործների, հասարակական գործիչների, քաղաքագէտների, աստիճանաւորների, զինւորականների, զօրապետների, լրագրողների, հրապարակախօսների, բարձրագոյն դպրոցներ աւարտած հայուհիների, թատերասէրների, առեւտրականների, արդիւնաբերողների վաճառականների, ազնւականների, հոգեւորականների, գեղջուկների, մելիքների պատկերները, որոնք իրանց գործով և կեանքով նշանակալից են եղել։

Տպագրւելու են «Ղարաբաղ և Ղարաբաղցիներ» այս փայլուն հանդէսի մէջ տեսարաններ ամբողջ Ղարաբաղի բոլոր նշանաւոր վայրերի, ինչպէս և ղարաբաղցիներին պատկանող զանազան քաղաքներում, երկիրներում տների, գործարանների պատկերները։

Եւ որովհետև անհնար է անհրաժեշտ բոլոր լուսանկարները առանց բացառութեան ձեռք բերելու, ուստի այսու յարգանօք հրաւիրւում են ձեռնհաս բոլոր ղարաբաղցիները աջակցել մեզ և շուտափոյթ հասցնել իրանց իմացած անձինքների և բնակած վայրերի լուսանկարները, հէնց լուսանկարների ետև էլ ամփոփ գրելով պատկերի բովանդակութիւնը։

Յօդւածները «Ղարաբաղ եւ Ղարաբաղցիներ» ալբոմ-ալմանախի համար, ինչպէս և երգերն ու նոտաները, բոլորը բացառապէս լինելու են ղարաբաղցիների մտքի, արւեստի և գրչի արտադրութիւններ։

«**ՂԱՐԱԲԱՂ** և **ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ**» ալբոմ-ալմանախի բաժանորդագինը 3 ր.

ՄԵԼՈՎԻ փայլուն թղթի վրայ 25 ր.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Դիմել՝ Тифлис. БЮРО ПЕЧАТИ, Головинскій пр., 41

ՓԱՐԻԶՈՒՄ ՄԵԾ ՊԱՀԵՍՏ ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ՃԻՒԶՆԵՐԻ

LINGERIE FINE, TROUSSEAUX,
BLOUSES. JUPONS et ROBES BRODEES

Le Trousseau Royal

116 Rue La Boëtie, 116. PARIS (8-e)
(Ghamps-Elysées)

(25—21)

Առաջին Մասնաւոր Հիւանդանոց

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնուած 1880 թ.

«606»-ի ներարկումն

Հիւանդների ընդունելութիւնը

Առ. 9 ժ.—2 ժ. ցեր.
Երեկոները 6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի. համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի Վերատեսուչ
Բժշկապետ՝ Բ. Նախասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԿԵԱՆ
(Вельяминов. 8)
Աչքի հիւանդ. մասնագէտ
Ընդունելութիւն { առ. 10—1 ժ. / երեկ. 5—7 ժ.

ԼՈՅՍ

Լուսանկարչական արւեստանոց

ԳՐԻԳՈՐ ԲԱԲԱԼԵԱՆԻ
(Михайлов. пр, 22)

Կատարում է լուսանկարչութեան վերաբերեալ ամենայն գործեր.

ՍԻԵՏԻՍ ԹԱՌՈՒՄԵԱՆԻ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՂԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹՂԹԻ ՏՈՊՐԱԿՆԵՐԻ

ԱՐՇԱԼՈՅՍ
ЗВѢЗДА

Ամենակատարելագործուած մեքենաներով պատրաստւում է ամեն տեսակ ամեն չափի թղթի տոպրակներ։

Գործարանին կից ՍԵՓՀԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ, որ տպագրում է տոպրակների վրայ փիրմաների ռէկլամներ և հասցէներ թղթի մեծ պահեստ։ Պետական և հասարակական հաստատութիւնների համար տպագրւում է ամեն տեսակ թղթեր, բլանկներ, ինչպէս և ընդունում է տպարանական գործին վերաբերեալ պատւէրներ։ Հասցէն՝ Тифлис.

А. М. Тарумян. Уг. Баронской и Ванкской, 1.

(5—11)

Типографія „Гермес“ Графская 6.